

# Գիտություն

ՀՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ

№ 7-8

(260-261)

2013 թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

## ՀՀ ԳԱԱ 70-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

# ԱՌԱՆՅ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՋ ՄԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՉԻ ԿԱՐՈՂ ԱՌԱՋԱԴԻՄԵԼ




«Գիտություն» թերթի շտաբի ԳԱԱ-ի և ԿԱԳԱ-ի ղեկավարները

**- Պարոն Բարխուդարյան, Ձեր գիտակցական կյանքը, ավելի քան 60 տարին, անցել է գիտությունների ազգային ակադեմիայում, որը շուտով տոնելու է հիմնադրման 70-ամյա հոբելյանը: Ի՞նչ մտորումներ են Ձեզ համակում տոնի նախօրյակին:**

- Հայտնի է, որ հայ ժողովուրդը տակավին հնագույն ժամանակներից հատուկ սեր ունի գիտության, առհասարակ լուսավորության նկատմամբ: Պատմության քառուղիներում մա իր այդ ունակությունները շռայլորեն դրսևորել է՝ ստեղծելով մնայուն արժեքներ, համաշխարհային քաղաքակրթությունը հարստացրել անկրկնելի գանձերով: Ասեմ մահ, որ գիտությունը համակարգող բարձրագույն հաստատություն ունենալու հարցը մշտապես մտահոգել է մեր ժողովրդի մեծերին: Սակայն միայն Հայրենական մեծ պատերազմի օրերին՝ 1943 թ., իրականացավ այդ ձգտումը. հիմնադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան: Ակադեմիայի ստեղծումով հանրապետությունում նոր թափ ստացավ գիտության զարգացումը, ձևավորվեցին և արդյունավետ սկսեցին գործել գիտության ժամանակակից նոր ճյուղեր: Ի պատիվ մեզ, կարճ ժամանակում Հայաստանի ակադեմիան հայտնի դարձավ որպես Խորհրդային Միության լավագույն գիտական կենտրոններից մեկը: Ավելին, Հայաստանի գիտության կաճառը միջազգային լայն ճանաչման արժանացավ:

գաղափարախոսությունը կաշկանդում, որոշ պարագաներում ուղղակի խեղաթյուրում էր պատմական երևույթների ճշմարտացի լուսաբանումը: Որպես կանոն ուսումնասիրությունների ոլորտից դուրս էին թողնվում ազգային բնույթի բազում հարցեր, ինչպես ասեմք ազգային-ազատագրական շարժումների, ազգային կուսակցությունների, եկեղեցու պատմությունը և այլն: Դրան հակառակ, փաստերն անտեսելով վարդապետ էին ներկայացվում կոմունիստական կուսակցության, հեղափոխական շարժումների, խորհրդային իշխանության օրոք կյանքի կոչված երևույթները: Պատմաբանները, մասնավորապես նոր և նորագույն շրջաններով զբաղվողները, աշխարակված գրքերի նախկինում ընդունված լրջմիտ քննարկումներին փոխարինելու եկան շնորհանդեսները: Բարձրակարգ ուսումնասիրությունների կողքին հրապարակ եկան ցածրորակ, ճիշտ կլիներ ասել՝ ընթերցողի հոգուն ու մտքին ոչինչ չտվող անորակ բազմաբնույթ ու բազմաքանակ խզբզանքները: Կորսվեցին աշխատությունների գնահատման չափանիշները: Խիստ նվազեց գրքի նկատմամբ հետաքրքրությունը: Ուրիշ խոսքով ասած, սահման չճանաչող ազատությունը դուռ բացեց մահ ոչ համակարգված, խստորեն ասված՝ խառնակ իրավիճակի:



տում էին կաշկանդված՝ գաղափարական սխալներ թույլ չտալու մտավախության մթնոլորտում:

Այդ ամենով հանդերձ, հարկ է նշել, որ իր ամբողջության մեջ խորհրդային պատմագիտությունը լուրջ հաջողություններ ունեցավ: Սակայն անցման շրջանում, հատկապես անկախության առաջին տարիներին, լայն շարժում սկսվեց խորհրդային պատմական գիտությունը ուղղակի ոչնչացնելու, այն կեղծիքների, խեղաթյուրումների ասպարեզ դիտելու ուղղությամբ: Ես համոզե եկա այդ ծայրահեղությունների դեմ (տե՛ս ՊԲՀ, 1990, N 4):

Անկախությունը լիակատար ազատություն բերեց: Գիտաշխատողը անկաշկանդ ստեղծագործելու լիիրավ ազատություն և հնարավորություն ստացավ: Ուշադրությունը բևեռվեց արգելված ազգային պատմության թեմաների վրա: Հրապարակ եկան նորովի շարադրված ծանրակշիռ շատ ուսումնասիրություններ: Սակայն դրա հետ մեկտեղ նվազեց հրատարակվող աշխատությունների նկատմամբ պահանջկոտությունը, պատմության հարցերով սկսեցին զբաղվել մահ մասնագիտական պատրաստվածություն չունեցող սիրողները: Հրատարակված գրքերի նախկինում ընդունված լրջմիտ քննարկումներին փոխարինելու եկան շնորհանդեսները: Բարձրակարգ ուսումնասիրությունների կողքին հրապարակ եկան ցածրորակ, ճիշտ կլիներ ասել՝ ընթերցողի հոգուն ու մտքին ոչինչ չտվող անորակ բազմաքանակ խզբզանքները: Կորսվեցին աշխատությունների գնահատման չափանիշները: Խիստ նվազեց գրքի նկատմամբ հետաքրքրությունը: Ուրիշ խոսքով ասած, սահման չճանաչող ազատությունը դուռ բացեց մահ ոչ համակարգված, խստորեն ասված՝ խառնակ իրավիճակի:

Իրավիճակը համարելու կարող են ասել, որ Հայաստանի գիտությունների ակադեմիայի կայացումը և վիթխարի գիտական նվաճումներն ուղղակիորեն կապվում են Վիկտոր Համբարձումյանի անվան հետ: Գիտական և գիտակազմակերպական իր գործունեությամբ մա արժանացավ համաշխարհային համբավի, բարձր գնահատականի ու ճանաչման հասցրեց ազգային ակադեմիան: ԽՍՀՄ և Հայաստանի պետական մրցանակների բազմակի դափնեկրի, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոսի, Հայաստանի Ազգային հերոսի կոչումները մեծամուն գիտնականի, գիտության անզուգական կազմակերպչի արժանի գնահատական էին, նրա անուրանալի փառքի առիավատյան:

**- Պարոն Բարխուդարյան, ավելի քան 20 տարի աշխատելով ԳԱԱ նախագահությունում որպես ակադեմիկոս-քարտուղար, փոխարեզդեմտ, հումանիտար բաժանմունքի ղեկավար, անմիջականորեն չփվել, հարաբերվել եք ակադեմիայի նրբե պրեզիդենտների՝ Վիկտոր Համբարձումյանի, Ֆադեյ Սարգսյանի և Ռադիկ Սարտիրոսյանի հետ: Ինչպե՞ս կրնուք գրեք նրանց գործունեությունը:**

- 1990 թ., երբ ինձ առաջարկվեց ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնը, մտադիր էի հրաժարվել: Երկար տարիների գիտակազմակերպական գործունեությունը հնարավորություն չէր տվել լիարժեք գիտական աշխատանքով զբաղվելու և ցանկանում էի այդ բացը լրացնել: Արվեստի ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Ռուբեն Ջարյանը կշտամբեց և խորհուրդ տվեց համաձայնել, նշելով, որ հենց միայն Վիկտոր Համբարձումյանի հետ աշխատելը արդեն մեծ պատեհություն է:

Ակադեմիկոս-քարտուղարի պարտականություններին ծանոթացնելիս պրեզիդենտ Համբարձումյանը այն համազոր համարեց բանակի շտաբի պետի պաշտոնին և հավելեց, որ մենք ավելի հաճախ ենք հանդիպելու: Եվ այդպես էլ եղավ:

Իրավ է, որ Համբարձումյանի իր հզոր տաղանդով կարողանում էր ճիշտ ուղենշել գիտության ամենատարբեր ճյուղերի զարգացման հեռանկարները: Նրա նախաձեռնությամբ հիմնվեցին գիտական նոր օջախներ, Մոսկվայից հրավիրվեցին արժանավոր մասնագետներ: Արտակարգ ուշադիր էր երիտասարդության նկատմամբ, որքան էլ զբաղված լիներ, ժամանակ էր գտնում և մասնակցում նրանց կազմակերպած միջոցառումներին: Նախաձեռնվողի էր հայոց լեզվի հարցում: Երիտասարդներից շատերը ռուսական կրթություն ունեին, լավ չէին տիրապետում մայրենի լեզվին: Այդպիսիները պրեզիդենտի պահանջով ասպիրանտուրա էին ընդունվում միայն հայոց լեզվից քննություն հանձնելու պայմանով:

Չարմանք էր հարուցում Համբարձումյանի տիտանական աշխատասիրությունը: Աստղագիտության բնագավառում

համաշխարհային հեղինակության հասնելը կարծես թե պետք է կլաներ նրա ամբողջ ժամանակը: Դրան եթե հավելենք ԳԱԱ պրեզիդենտի, Բյուրականի աստղադիտարանի տնօրենի, ԽՍՀՄ-ի և արտերկրի բազմաթիվ գիտական, հասարակական կազմակերպությունների աշխատանքներին մասնակցելը, հասկանալի կդառնա նրա զբաղվածության աստիճանը:

Առանց վարանելու կարող են ասել, որ Հայաստանի գիտությունների ակադեմիայի կայացումը և վիթխարի գիտական նվաճումներն ուղղակիորեն կապվում են Վիկտոր Համբարձումյանի անվան հետ: Գիտական և գիտակազմակերպական իր գործունեությամբ մա արժանացավ համաշխարհային համբավի, բարձր գնահատականի ու ճանաչման հասցրեց ազգային ակադեմիան: ԽՍՀՄ և Հայաստանի պետական մրցանակների բազմակի դափնեկրի, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոսի, Հայաստանի Ազգային հերոսի կոչումները մեծամուն գիտնականի, գիտության անզուգական կազմակերպչի արժանի գնահատական էին, նրա անուրանալի փառքի առիավատյան:

Ինձ համար ճակատագրի մեծ պարզե են համարում, որ հնարավորություն ունեցա համատեղ աշխատելու, ամեն օր հանդիպելու և մոտիկից չփվելու մեծն Համբարձումյանի հետ:

1993 թ. ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ ընտրվեց նշանավոր պետական-հասարակական գործիչ, գիտակազմակերպական աշխատանքի մեծ փորձ ունեցող Ֆադեյ Տաճատի Սարգսյանը: ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով դժվարին իրավիճակ էր ստեղծվել անկախություն ստացած բոլոր հանրապետություններում: Հայաստանում իրավիճակն ավելի ծանր էր՝ ավերիչ երկրաշարժի, դաժան շրջափակման և դարաբաղյան պատերազմի հետևանքով: Հրամայական պահանջ էր դարձել ամեն զնով պահպանել տասնամյակների ընթացքում ձևավորված գիտության հիմնական ուղղությունները, գիտական ներուժը: ԳԱԱ ղեկավարությունը որդեգրեց այդ քաղաքականությունը:

Այդ շրջանում ԳԱԱ-ն ուներ երեք բաժանմունք՝ ֆիզիկա մաթեմատիկական, բնական և հասարակական գիտությունների: Բաժանմունքները համապատասխանաբար ղեկավարում էին Յու. Շուքուրյանը, Է. Գաբրիելյանը և ես: Մենք աշխատում էինք ընդհանուր դժվարին պայմաններում, բայց փոխըմբռնման ու համագործակցության բարենպաստ մթնոլորտում: Թեպետև ակադեմիան անխուսափելի կորուստներ ունեցավ, սակայն Ֆադեյ Սարգսյանի ղեկավարությամբ հնարավոր եղավ հիմնականում պահպանել ակադեմիայի գիտական ներուժը: Համագործակցություն ստեղծվեց

Լրացավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, քիմիական գիտությունների դոկտոր, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտական մտավորականության մասնազված ներկայացուցիչ Արամ Արտաշեսի Շահինյանի ծննդյան 75-ամյակը:



Ավարտելով Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը, այնուհետև ԽՍՀՄ ԳԱ-ի ակադեմիկոս Ն.Ն.Սենյոնովի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան, աշակերտելով մեծանուն քիմիկոս, ակադեմիկոս Ն.Ս.Ենիկոլովի մասնավորվեց որպես լայն հետաքրքրությունների տեր գիտնական, որը հետագայում իր գիտելիքներն ու փորձը ներդրեց Հայաստանում գիտական նոր ուղղությունների ստեղծման և զարգացման գործում: Աշխատելով մասնագիտությունների հան-

# ՄԵԾ ԳԻՏՆԱԿԱՆ ՈՒ ԶԱՂԱԶԱՅԻՆ

գուցակետում՝ նա մեծ ներդրում ունեցավ ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության հարակից մի շարք կարևոր պրոբլեմների լուծման մեջ, որոնցում նա սկզբնավորել և զարգացրել է գիտական նոր ուղղություններ:

**Պոլիմերման պրոցեսների կինետիկայի բնագավառում** Ա.Շահինյանը իր ավանդն ունեցավ իրական հետազոտողական պոլիմերների առաջացման մեխանիզմների և հատկությունների փոխադարձ կապի տեսության ստեղծման մեջ: Նրա աշխատանքներում, որոնք կատարվել են պրոֆ. Վ.Կ.Իվանովի հետ համատեղ, բացահայտվել է խզման միջոցով շղթայի փոխանցման նոր տարրական ռեակցիայի պայմաններում առաջացող պոլիմերի մոլեկուլազանգվածային բաշխման տեսությունը: Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Ալ. Ալ. Բեռլինի բնորոշմամբ, այս բնագավառում «Ա. Ա. Շահինյանի ստացած արդյունքները դարձան դասական և օգնեցին ստեղծել պոլիացետայլների արդյունաբերական արտադրություն»:

Այս աշխատանքներն ամփոփվեցին և Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտում պաշտպանվեցին թեկնածուական ատենախոսության ձևով:

**Միջուկների ջրային լուծույթների ֆիզիկական քիմիայի և էնուլիոն պոլիմերացման** բնագավառում Ա. Շահինյանը (պրոֆ. Լ. Մելքոնյանի մասնակցությամբ) մշակել է էնուլիոն պոլիմերների ստացման մեխանիզմի և հատկությունների վրա համակարգի դինամիկ կառուցվածքի ազդեցության տեսությունը: Ցույց է տրվել, որ էնուլիոն պոլիմերման ընթացքում կարելի է հասնել սինթեզվող պոլիմերների ցանկալի հատկությունների՝ ազդելով համակարգի կառուցվածքի վրա: Այդ աշխատանքներն ամփոփվել են Ա. Շահինյանի «Իոնական միջուկների կառուցվածքների դերը էնուլիոնային մակրոմոլեկուլների ձևավորման մեխանիզմներում» գրքում (1985թ.): Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի «Սինթետիկ պոլիմերային նյութերի» ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ն.Ս.Ենիկոլովի պոլի բնութագրմամբ. «Ա. Ա. Շահինյանի կողմից առաջարկված պատկերացումները մակրոնյութային ակտիվ միասնությունների լուծույթների վերաբերյալ թույլ են տալիս զարգացնել մի նոր գիտական ուղղություն, որը ներառում է ոչ միայն պոլիմերման պրոցեսները, այլև միջուկային կատալիզը, հեղուկ բյուրեղները և այլն»:

Այս արդյունքներն ամփոփվել են Ա. Շահինյանի կողմից ԽՍՀՄ ԳԱ Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում պաշտպանված քիմ. գիտ. դոկտորի և 5 թեկնածուական ատենախոսություններում:

**Լիոտրոպ հեղուկ բյուրեղների քիմիայի և ֆիզիկայի** ասպարեզում Ա. Շահինյանը առաջիններից մեկն էր, որ նախկին ԽՍՀՄ-ում սկսեց հիմնարար հետազոտություններ կատարել բնության մեջ լայն տարածում ունեցող լիոտրոպ հեղուկ բյուրեղների բնագավառում: Այդ համակարգերի կառուցվածքային նմա-

նությունները միջուկների և բջջային թաղանթների հետ թույլ տվեցին, որ Ա. Շահինյանի կողմից միջուկային համակարգերի համար առաջարկված պատկերացումները և մոտեցումներն օգտագործվեցին նաև լիոտրոպ հեղուկ բյուրեղների ուսումնասիրության մեջ: Ցույց է տրվել, որ լիոտրոպ հեղուկ բյուրեղների մոլեկուլային և վերմոլեկուլային կառուցվածքների միջև գոյություն ունի որոշակի կորելյացիա, որը մեծ հնարավորություններ է ստեղծում լիոտրոպ հեղուկ բյուրեղների կիրառության նոր ուղիներ բացահայտելու համար: Առաջին անգամ այս համակարգերն առաջարկվեցին որպես ճշգրիտ չափիչ սարքերի զգայուն տարրեր: Ստեղծվեցին սարքեր, որոնք կյանքի կոչվեցին և ցուցադրվեցին Լայպցիգի Միջազգային տոնավաճառում: Ճանաչված գիտնական, Ռուսաստանի ԳԱ «Կրիստալոգրաֆիայի» ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Բ.Կ.Վայնշտեյնի գնահատմամբ. «Ա. Ա. Շահինյանի կողմից ստեղծվել է լիոտրոպ հեղուկ բյուրեղների հիմնական կառուցվածքային միավորներում տեղի ունեցող կառուցվածքային ձևափոխումների վերաբերյալ տեսություն և նրան կարելի է համարել Հայաստանում լիոտրոպ հեղուկ բյուրեղների քիմիայի և ֆիզիկայի գիտական ուղղության հիմնադիր»:

Այս բնագավառում ստացված արդյունքներն ամփոփվեցին Ա. Շահինյանի կողմից ԽՍՀՄ ԳԱ Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտում պաշտպանված ֆիզմաթ գիտ. դոկտորի ատենախոսությունում, հետագայում ևս 2 դոկտորական, ինչպես նաև 5 թեկնածուական ատենախոսություններում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների և հաշվողական ռեսուրսների թափ առնող զարգացումը և դրանց կիրառության հնարավորությունները տարբեր ոլորտներում, 1990-ական թվականների վերջերից գիտության և գիտելիքահենք տեխնոլոգիաների բնագավառում բերեցին մի որակապես նոր իրավիճակի, որը հիմք հանդիսացավ արձանագրելու, որ ոտք են դնում «21-րդ դարի գիտության» դարաշրջան: Բնական գիտությունների մասով այս նոր ուղղությամբ իր ծանրակշիռ մասնակցությունն է բերում նաև Ա. Շահինյանի ղեկավարած գիտական անձնակազմը:

**Համակարգչային քիմիա և կենսաբանություն ուղղությունը** Հայաստանում դեռևս 2000 թվականից ակտիվորեն զարգանում է Ա. Շահինյանի ղեկավարությամբ: Առաջին անգամ Հայաստանում հիմնադրվել են Մոլեկուլային դինամիկայի և Համակարգչային թաղանթաբանություն գիտական ուղղությունները ընդգրկելով ֆոսֆոլիպիդային թաղանթների, միջուկային լուծույթների և լիոտրոպ հեղուկ բյուրեղների հետազոտության ոլորտները: Հաշվողական ռեսուրսների օգտագործման շնորհիվ ստացվել են նոր գիտական գիտական արդյունքներ, որոնք հրապարակվել են աշխարհի բարձր վարկանիշ ունեցող գիտական ամսագրերում և մեծ հեղինակություն են վայելում: Ամերիկյան BioMedLab հետազոտությունների վարկանիշը գնահատող կազ-

մակերպությունը Ա. Շահինյանի և նրա աշակերտների այս բնագավառում կատարած աշխատանքները դասել է նույն ոլորտի լավագույն աշխատանքների շարքին: Ստացված արդյունքներն ամփոփվել են 5 թեկնածուական ատենախոսություններում:

Ներկայումս Ա. Շահինյանի ղեկավարությամբ գործող գիտական անձնակազմը իրականացնում է բնական գիտություններում բարձր արտադրողական հաշվողական ռեսուրսների օգտագործման կատարվող աշխատանքներ՝ օգտվելով ինչպես «Հայ Գրիդի», այնպես էլ մի շարք այլ երկրներում գտնվող գերհամակարգիչների հնարավորություններից: Այս բնագավառում ձեռք բերված կարևոր արդյունքների համար Ա. Շահինյանն իր աշակերտի հետ 2008թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին:

Ա. Շահինյանի կողմից, ինչպես նաև նրա գիտական ղեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել են 4 դոկտորական և 16 թեկնածուական ատենախոսություններ:

Ա. Շահինյանը շուրջ 200 գիտական հոդվածների հեղինակ է: Նա հեղինակ է նաև 3 մենագրության, ինչպես նաև երեք գրքերի առանձին գլուխների, որոնք լույս են տեսել Nova Science Publishers, Inc.(ԱՄՆ) հրատարակչության կողմից:

Իր գիտական վաստակի համար Ա. Շահինյանն ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից (2000 թ.), այնուհետև իսկական անդամ (2010 թ.): 2009 թ. նա արժանացել է գիտության վաստակավոր գործիչ կոչման:

Ա. Շահինյանը մեծ դեր է կատարել նաև գիտության ոլորտը համակարգող օրենսդրական դաշտի ձևավորման գործում: 1992-1999 թթ., լինելով ՀՀ գիտության և բարձրագույն կրթության (այսպիսով՝ գիտության և կրթության) փոխնախարար, իսկ անուհետև՝ 1999-2011 թթ. ՀՀ ԳԱԱ նախագահի տեղակալ, ՀՀ ԳԱԱ բնական, ապա քիմիական և երկրի մասին գիտությունների բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնակատար, նա կարևոր դերակատարում է ունեցել «ՀՀ գիտության և գիտատեխնիկական գործունեության մասին» և «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքների ստեղծման մեջ, որոնք թույլ են տվել սահմանել անկախ Հայաստանում գիտական կազմակերպությունների, այդ թվում և ՀՀ ԳԱԱ իրավական կարգավիճակը և գործունեության առանձնահատկությունները:

Ա. Շահինյանը զգալի ավանդ է ունեցել նաև գիտության բնագավառում միջպետական համագործակցության կայացման գործում: Իր գոյության ողջ ժամանակաշրջանում (1996-2007 թթ.) նա եղել է Եվրոպական INTAS կազմակերպության գործունեության համակարգողը Հայաստանում, 1996-1997 թթ. եղել է «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի ստեղծման համատեղ հանձնաժողովի համանախագահ, եղել է Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ՄԳՏԿ) համակարգող խորհրդի անդամ և այլն:

Այժմ Ա. Շահինյանն իր գիտական գործունեությունն իրականացնում է ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնում, իր կողմից ստեղծված «Կենսաինֆորմատիկայի» լաբորատորիայում: Նա ԵՊՀ-ի կենսաբանության ֆակուլտետում դասավանդում է «Կենսաինֆորմատիկա» առարկան: Ա. Շահինյանը Հայաստանում առաջին էլեկտրոնային գիտական ամսագրի՝ «Բնական գիտություններ», գլխավոր խմբագիրն է:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը, քիմիական և երկրի մասին գիտությունների բաժանմունքը և հանրապետության ողջ գիտական հասարակությունը սրտանց և ջերմորեն շնորհավորում են Արամ Արտաշեսի Շահինյանին հորելայանի առթիվ ցանկանալով նրան քաջառողջություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ:

**ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀՀ ԳԱԱ քիմիական և երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Լևոն ԹԱՎԱԴՅԱՆ**

# ԱՌԱՆՑ ԳԻՏՈՒԹՅԱՆ...

➤1 անկախ հանրապետություններից Ռուսաստանի, Ուկրաինայի, արտասահմանյան երկրների գիտական կենտրոնների հետ: Հիմնվեցին գիտական նոր հաստատություններ: Հարկ է նշել, որ ակադեմիայի համակարգում ֆինանսատնտեսական դժվարությունները և ստեղծված սոցիալական լարվածությունը մեղմելու մեծապես նպաստում էր պրեզիդենտ Ֆ. Սարգսյանի հարցերը խաղաղորեն լուծելու, մարդկանց մշտապես ընդառաջ գնալու վարքագիծը:

2006 թ. պրեզիդենտ ընտրվեց ակադեմիայի համակարգում աշխատանքային մեծ փորձ ունեցող, պետական համալսարանի նախկին ռեկտոր Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանը: Գիտական բարձրագույն հաստատության առջև ծառայած էին լուծում պահանջող բազում խնդիրներ: Անհրաժեշտ էր խորացնել ձեռք բերված որոշ հաջողությունները: Հասունացել էր ԽՍՀՄ-ի ժամանակակից անփոփոխ մնացած ակադեմիայի համակարգը վերակառուցել նոր պահանջների ոգով, կատարել կադրերի երիտասարդացում և այլն:

Կենսաբանական և քիմիական գիտությունների հարակից մասնագիտությունների մի շարք ինստիտուտներ միավորելու միջոցով ստեղծվեցին գործող գիտական կենտրոններ: Վերջին վեց տարվա ընթացքում երկու անգամ ընտրություններ կազմակերպելու շնորհիվ ակադեմիկոսների և թղթակից անդամների միջին տարիքը նվազեց: Նույն եղանակով նկատելիորեն երիտասարդացավ ինստիտուտների տնօրենների կազմը: Բարձր հիմքերի վրա դրվեց, աշխուժացավ մագիստրատուրայի և ասպիրանտուրայի միջոցով երիտասարդ մասնագետներ պատրաստող միջազգային գիտակրթական կենտրոնի գործունեությունը:

Պրեզիդենտի նախաձեռնությամբ կատարվեց մեկ այլ նորամուծություն ևս. արտասահմանյան տարբեր երկրներում բնակվող հայ մասնագետների ներուժը օգտագործելու, ինչպես նաև նրանց՝ հայրենիքի հետ կապելու նպատակով նրանցից արժանավորներն ընտրվեցին ԳԱԱ արտասահմանյան անդամ: Ստեղծվեց սփյուռքահայ բաժին, որը համակարգում է նրանց հետ տարվող աշխատանքները:

Պրեզիդենտ Ռադիկ Մարտիրոսյանը լավ գիտի ակադեմիայի հոգաբերում ու նրա առաջ ծառայած խնդիրները: Գիտական բարձր արդյունքների հասնելու համար նա հետևողականորեն, բայց ծանրախոս պահվածքով ձգտում է հասնել նրան, որ հնարավոր դառնա նոր տեխնոլոգիայով վերազինել ակադեմիական ինստիտուտները, բարելավել գիտական աշխատանքի պայմանները, աշխատողների սոցիալական վիճակը: Ակնկալում ենք, որ այս և մյուս բոլոր ասպարեզներում կունենանք առաջընթաց:

**- Հարգելի պաշտոնառարարյան, հորելայանի ոչ միայն անցած ուղու արժևորումն են, այլ նաև բացթողմների վերհանումը: Ի՞նչ կասեք այդ մասին:**

Այստեղ տեղին է օգտագործել խորհրդային տարիներին մշտապես շրջանառվող տերմինը՝ ինքնաքննադատությունը, և արձանագրել, որ ակադեմիան, որպես հզոր ներուժ ունեցող բարձրագույն գիտական հաստատություն, թերացել է իր շատ կարևոր առաքելությունն իրականացնելու գործում: Նա անկախության ամբողջ շրջանում պասիվ է գտնվել և մոտիկից չի անդրադարձել հայ ժողովրդի առջև ծառայած հասարակական-քաղաքական հիմնախնդիրներին:

Կարծում են, սխալված չեն լինի, եթե այդ թերությունը հասցեագրենք ամբողջ հայ մտավորականությանը:

**Հարցազրույցը վարեց Ա. ՏԵՐ-ԳԱՐԻԵԼՅԱՆԸ**



# ՀՀ ԳԱՍ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆՂԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ ԳԱՍ սփյուռքի բաժինը

ՀՀ ԳԱՍ արտասահմանյան անդամ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ստեփան Եսայանը ծնվել է 1947թ. հունիսի 18-ին Յայաստանում Եղեգնաձորում, գյուղացու ընտանիքում: Մինչև 8-րդ դասարանը հաճախել է Եղեգնաձորի շրջանի Վերնաշեն գյուղի դպրոցը, այնուհետև տեղափոխվել է և կրթությունը շարունակել Երևանի թիվ 67 դպրոցում:

Հայրը՝ Խորեն Եսայանը, թեև կրթություն չէր ստացել, բայց ուսումնաստեճ էր և խրախուսեց որդուն ստանալու բարձրագույն կրթություն:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո Ստեփանը վճռել էր ընդունվել ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետ, սակայն այդ տարի առաջին անգամ պոլիտեխնիկական ինստիտուտում բացվեց կիսահաղորդչային ֆիզիկայի և տեխնոլոգիայի ամբիոն: Առավելություն այն էր, որ ուսանողը միանգամից ստանում էր երկու կրթություն՝ ֆիզիկա և ինժեներիա: Մոսկվայում կար նման ֆակուլտետ, իսկ Կովկասում ինժեներաֆիզիկական մասնագիտությամբ կրթությամբ չկար, և որոշվել էր այն առաջինը բացել Յայաստանում: 1965թ. Ստեփան Եսայանն ընդունվեց պոլիտեխնիկական ինստիտուտի այդ ֆակուլտետը, որտեղ հավաքվել էր լուրջ պրոֆեսորադասախոսական կազմ:



որպես հրավիրյալ դասախոս: Ստեփան Եսայանը բավական մասնագիտացել էր օպտիկայի ոլորտում, իսկ նույն ժամանակահատվածում Միլիկոնային հովտում նոր ընկերություններ էին բացվում: Իր հնդիկ գործընկերոջ հետ 2000թ. նա հիմնեց օպտիկական անջատիչ մի ընկերություն, որի նպատակն էր զբաղվել մաքուր օպտիկայով՝ առանց էլեկտրական տեղափոխությունների: 2002թ. ԱՄՆ-ում տեխնոլոգիաների բնագավառում տեղի ունեցած մեծ աղետից հետո, երբ Միացյալ Նահանգներում հասկացան, որ այն ներդրումները, որ արվել էին այս ոլորտում, շատ քիչ արդյունք են տվել. մի շարք մեծ ընկերություններ փակվեցին: Փակվեց նաև այն ընկերությունը, որին մատակարարում էր Եսայանի ստեղծած ընկերությունը: Սակայն նա չընկրկեց դժվարությունների առջև և 2003թ. ստեղծեց իր սեփական ընկերությունը՝ Spectralus անվամբ, որի հիմնադիր տնօրենն է ինքը, և այն մինչև այժմ էլ գործում է:

## Ստեփան Եսայան

Ստեփան Եսայանը մեծ երախտագիտությամբ է հիշում իր դասախոսներին: Միլվա Բալյանը, ում նա կոչում էր ֆանտաստիկ ֆիզիկոս, Ստեփանի մեջ տեսել էր իրական ներուժ և մեծ հույսեր էր կապում նրա հետ: Ստեփան Եսայանը սովորելու զուգընթաց աշխատել էր Միլվա Բալյանի լաբորատորիայում, որտեղ ամրագրեց իր տեսական գիտելիքները: Նրա մեկ այլ դասախոս՝ Էդուարդ Մելիքյանը, 3-րդ կուրսից Ստեփանին տարավ ֆիզիկայի ինստիտուտ՝ սովորելու և զուգահեռ աշխատելու: Ավարտական թեզի նախապաշտպանությունից առաջ Ստեփան Եսայանը Էդուարդ Մելիքյանի առաջարկով, ով նաև նրա ավարտական թեզի ղեկավարն էր, մեկնեց Լենինգրադի Ա.Ֆ. Իոֆեի անվան ֆիզիկատեխնիկական ինստիտուտ՝ իրականացնելու պրակտիկ աշխատանքը:

Բուհ-ն ավարտելուց հետո՝ 1970թ., Ստեփան Եսայանն ընդունվեց Լենինգրադի Ա.Ֆ. Իոֆեի անվան ֆիզիկատեխնիկական ինստիտուտի ասպիրանտուրան՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Գեորգի Սմոլենսկիի ղեկավարությամբ, ով, ըստ Ստեփան Եսայանի, ուներ ասպիրանտի հետ աշխատելու փայլուն ունակություններ: 1975թ. Ստեփան Եսայանը պաշտպանեց գիտական ատենախոսությունը «Սեզմետոլ էլեկտրական բազային անցումների ուսումնասիրությունն ակուստաօպտիկ մեթոդներով» թեմայով: Չնայած այն հանգամանքին, որ գիտական ղեկավարը հորդորում էր Ստեփանին մնալ Լենինգրադում, այնուամենայնիվ նա նախընտրեց վերադառնալ հայրենիք, սակայն խոստանաքով իր ղեկավարին, որ եթե բավարար աշխատանքային պայմաններ չլինեն, կվերադառնա Լենինգրադ:

1975թ. մինչև 1977թ. Ստեփան Եսայանը իր բուհ-ում պոլիտեխնիկական ինստիտուտում, դասավանդեց տեսական ֆիզիկա: Սակայն 1977թ. կրկին որոշեց վերադառնալ Լենինգրադ: Նա աշխատանքի անցավ Լենինգրադի Ա.Ֆ. Իոֆեի անվան ֆիզիկատեխնիկական ինստիտուտում՝ որպես կրտսեր գիտաշխատող:

1980-ականներին նա Լենինգրադի ֆիզիկատեխնիկական ինստիտուտում որպես լավագույն ասպիրանտ շահեց մրցանակային 2-րդ տեղը: ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայում անց էր կացվում տարվա լավագույն աշխատանք մրցույթը, և 1982թ. Եսայանի ներկայացրած աշխատանքը համարվեց լավագույններից մեկը:

Ստեփանը շարունակեց իր գիտական գործունեությունը. 1988թ. պաշտպանեց դոկտորական ատենախոսությունը և որպես խմբի ղեկավար սկսեց աշխատել նույն գիտահետազոտական ինստիտուտում:

1991թ. Ստեփան Եսայանը հրավեր ստացավ Միացյալ Նահանգների Նյու Ջերսիի Ռադկերս պետական համալսարանից՝ երեք ամիս դասավանդելու համալսարանում: Այդ ընթացքում տեղի ունեցավ ԽՍՀՄ փլուզումը: Ստեփան Եսայանին առաջարկեցին ևս վեց ամիս մնալ և դասախոսություն կարդալ համալսարանում: Վեց ամիս անց նրան առաջարկեցին որպես հիմնական պրոֆեսոր աշխատել Նյու Ջերսիում. Ստեփան Եսայանը համաձայնվեց: 1996թ. նա ստացավ մեկ այլ առաջարկ՝ աշխատել աշխարհի ամենամեծ ընկերություններից մեկի՝ National Semiconductor-ում: Բնականաբար Ստեփան Եսայանը համաձայնվեց և ստանձնեց գիտահետազոտական խմբի ղեկավարի պաշտոնը:

1981-99թթ. Ստեփան Եսայանը ժամանակ առ ժամանակ աշխատել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում

Միացյալ Նահանգներում գործող այս ընկերությունում աշխատում են 8 մասնագետներ, որոնց հիմնական խնդիրն է գիտահետազոտական նոր լազերների պատրաստումը: Միաժամանակ նրա ընկերությունը ունի մասնաճյուղ Երևանում, որտեղ աշխատում են 25 մասնագետներ, և որոնց խնդիրն է փոքրիկ օպտիկական չիպերի կոմպոնենտների ստեղծումը: Եսայանի շնորհիվ օպտիկայի շատ բարձրակարգ մասնագետներ, որ պատրաստվում էին լքել Յայաստանը, փոխել մասնագիտությունը և դառնալ ծրագրավորող, մնացին հայրենիքում և այսօր աշխատում են այդ ընկերությունում: Ստեփան Եսայանը հույս ունի, որ այս ընկերությունն անպայման կընդարձակվի Յայաստանում և կներգրավի այլ մասնագետներին:

Ստեփան Եսայանը եղել է տասը ատենախոսի գիտական ղեկավար, նա 12 միջազգային արտոնագրի հեղինակ է և այժմ էլ ներկայացրել է 4 արտոնագրի հայտ:

Նրա որդին՝ Ալեքսան Եսայանը, գնում է հոր հետքերով, և այժմ աշխատում է «Intel» ընկերությունում՝ որպես ծրագրի ղեկավար, իսկ դուստրը՝ Ռուզաննա Եսայանը, աշխատում է Նյու Յորքում, իր սեփական ընկերությունում՝ որպես ֆոտոլիտագրող:

Հաշվի առնելով Ստեփան Եսայանի գիտական և մանկավարժական մեծ վաստակը, ինչպես նաև մայր հայրենիքի հետ սերտ կապերը՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 2008 թվականին նրան ընտրել է ԳԱՍ արտասահմանյան անդամ:

Ստեփան Եսայանը այսօր ևս սերտորեն համագործակցում է Յայաստանի գիտական հաստատությունների հետ և ջանում մեծացնել իր կազմակերպությունը՝ առավել շատ երիտասարդ գիտնականների մայր հայրենիքում պահելու ակնկալիքով:

Գոհար ԻՍԿԱՆՂԱՐՅԱՆ  
պ.գ.թ. դոցենտ

ՀՀ ԳԱՍ սփյուռքի բաժնի գիտքարտուղար

### ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

## «Պարմարանասիրական հանդես» - 1-ը

Ընթերցողի սեղանին է «Պատմաբանասիրական հանդեսի» 2013 թվականի 1-ին համարը: Թեև քիչ ուշացումով «Գիտությունը» ձեռք է ներկայացնում հանդեսում տեղ գտած առավել ուշագրավ ու հետաքրքրական հրապարակումները:

Համընտր շարունակում է «Շուշին Արցախյան գոյապայքարում» հրապարակման մեջ հեղինակը հանգամանորեն ներկայացնում է 1918-20 թվականներին վտանգված Արցախի, նրա շուրջը բազում թշնամիների կողմից նյութված դավերի մասին:

«Այնուհանդերձ, իրենց փառավոր նախնիների ազատատենչ ոգին ու արիությունը չկորցրած Արցախյան հայությունը ռիսկալ թշնամու դեմ կենսամահու պայքար մղեց իր բնօրրան երկ-

րի ազատության ու անկախության համար», գրում է հեղինակը և մեզ ներկայացնում այդ հերոսապատումի էջերը:

Մեծ հայրենականի տարեգրության ռահվիրա Կլիմենտ Հարությունյանը գեղեցիկ պատում է մատուցել մեզ՝ պատմելով Խորհրդային Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի սխրալից կյանքի մասին, լեզենդար կյանք, որը օրինակ պիտի լինի այսօրվա երիտասարդության համար:

Ուշագրավ և արդիական հրապարակում է Գրիգորի Այվազյանի «О термине азербайджанцы, судьбах коренного населения Азербайджана и подлинных предках современных азербайджанцев» ուսումնասիրությունը: Կարծում ենք պետք է կարդալ՝ կրկին համոզվելու հա-

մար, որ դրանք նույն թուրքական վայրի ցեղերի արժանավոր հետնորդներն են:

Գարեգին Թումանյանը նախնական հաղորդում է հրապարակել Ազարակում պեղված հնագույն հայկական մշակույթի նորահայտ հուշարձանի մասին:

Ուշագրավ և օգտակար հետազոտական հրապարակում է Մելանդա Աղաբեկյանի «Հայ-ուրարտական ստուգաբանական դիտարկումներ» հոդվածը և յուրովի հրավեր՝ ավելի մոտիկից զբաղվելու այդ խնդրով:

ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ Աելիտա Դոլուխանյանն ընթերցողին է ներկայացրել ֆրանսիական հայագիտության հիմնադիր Սեն Մարտենի «Հիշատակարաններ Հայաստանի պատմության և

աշխարհագրության» երկի երկու նախաբանները: Անպայման պետք է կարդալ:

Նորություն են և շատ ուսանելի Անուշավան Ջաքարյանի «Մանուկ Աբեղյանը հայ-վրացական հարաբերությունների մասին» հրապարակումը և Մանուկ Աբեղյանի մի քանի հոդվածները այդ հարաբերությունների մասին: Կարդացե՛ք և ճանաչե՛ք մեր վաղեմի եղբայր հարևաններին:

Մենք տեղի սղության պատճառով, ի գորու չենք ամբողջովին ներկայացնել հանդեսի հրապարակումները, ուսումնասիրությունները, տեղեկատվությունն ու հետազոտությունները, թեև բոլորն էլ հետաքրքիր են, պարունակում են նորություններ:

Այլ խոսքով, հանդեսը ստացվել է, բովանդակալից է, ուշագրավ և այն պետք է անպայման կարդալ: Օգտակար է:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՃԱՌԸ 70 ՏԱՐԵԿԱՆ Է

Շուտով, շատ շուտով մենք մեծ շուքով և հպարտությամբ կնշենք Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադրման 70 տարին: Ասացի հպարտությամբ, որովհետև աշխարհում հազիվ թե գտնվի փոքրաքանակ, զարհուրելի եղեռն ապրած մի ժողովուրդ, որը ոչ միայն կունենա իր ակադեմիան, այլև կարծ ժամանակում աշխարհին կզարմացնի զարմանալի գիտական նվաճումներով, կունենա մեծահռչակ, աշխարհին հայտնի գիտնականների փայլուն մի փառանգ, որոնք նոր խոսք սասցին համաշխարհային գիտության բազմաթիվ ոլորտներում:

Ես հիշում եմ ակադեմիայի 50-ամյակի հանդիսավոր ժողովը, ուր Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Յուրի Օսիպովը հայտարարեց. «...Աշխարհի ցանկացած հզոր ու մեծ երկիր կհպարտանար՝ ունենալով այնպիսի ակադեմիա, ինչպիսին է Հայաստանի գիտությունների ակադեմիան»:

Հիրավի ճշմարիտ գնահատական մեր ակադեմիային, նրա հզոր ներուժին, հայ տաղանդավոր գիտնականների ընկերակցությանը:

Ինչպես արդեն նշել ենք, Հայաստանի գիտությունների ակադեմիայի բացումը տեղի ունեցավ 1943 թվականի նոյեմբերի 29-ին՝ Խորհրդային Հայաստանի 23-րդ տարեդարձի օրը՝ Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում այդ առթիվ կազմակերպված հանդիսավոր նիստին, որը փաստորեն ակադեմիայի հիմնադիր ժողովն էր: Այն բացեց Հայաստանի ԳԱ ավագագույն ակադեմիկոս Ստեփան Մալխասյանը:

Այսպիսով, փոքրիկ Հայաստանն ունեցավ իր գիտական կենտրոնը, իր ակադեմիան, որի մասին փափազում էր տասնամյակներ և հարյուրամյակներ: Այսինքն՝ մեր ակադեմիան դատարկ տեղում չծնվեց, հայ գիտությունը, հայ ժողովուրդը իր ողջ պատմության ընթացքում երկնել, նախապատրաստել էր այն: Հետաքրքիր մի փաստ. նորաստեղծ գիտությունների ակադեմիայի իսկական անդամների ընտրության համար ներկայացված էր 44 անուն: Ընտրվեցին 23-ը: Ակադեմիկոսների այս սերունդը, տասնամյակների ընթացքում նրանց շարքերը համալրողները, գիտնականները, գրողները, մշակույթի գործիչները, ուսուցիչները, ընդհանրապես մեր մտավորականությունը ժողովրդի էլիտան էր, ծաղիկը: Իսկ ովքե՞ր են այսօր մեր այսպես կոչված «էլիտան»:

Այո, մենք ունենք գիտական այն ներուժը և առաջադեմ գիտությունը, որի արմատները հեռավոր անցյալից են գալիս:

Ի սկզբանե Հայաստանում գիտության զարգացման համար նշանաբան դարձան մեթոդատառ գրված հայերեն առաջին բառերը՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Այս նշանաբանի երբոր էլ վրա հասավ հայ հոգևոր մշակույթի ոսկեդարը, հայերեն թարգմանվեց Աստվածաշունչը, Պատմահայր Մովսես Խորենացին շարադրեց նախորդ հազարամյակների հայոց պատմությունը, ստեղծվեց ազգային դպրոցը, աննախադեպ ծաղկում ապրեցին գիտությունը, ազգային գիրն ու գրականությունը: Ոսկեդարն այնպես արգասավորեց հայ ոգին, որ հետագա դարերում ևս, չնայած հայ ժողովրդին բաժին ընկած դաժան փորձություններին, գիտության, գրականության ու ար-

վեստի տարբեր ծյուղերում ստեղծվեցին մնայուն արժեքներ, որոնք տոգորված են մարդուն և աշխարհը ճանաչելու և կատարելագործելու վեհ գաղափարներով: Այդ է վկայում Դավիթ Անհաղթի (11-րդ դ.), Անանիա Շիրակացու (7-րդ դ.), Գրիգոր Նարեկացու (10-րդ դ.), Գրիգոր Մագիստրոսի (11-րդ դ.), Մխիթար Հեթումցու (12-րդ դ.), Մխիթար Գոշի (12-րդ դ.), Թորոս Ռոսլինի (13-րդ դ.), Գրիգոր Տաթևացու (15-րդ դ.) և նրանց ժամանակակից ու հաջորդ բազմաթիվ մտածողների թողած հարուստ գիտական ժառանգությունը, որով իրավամբ հպարտանում է հայ ժողովուրդը: Գիտական մտքի բարձր մակարդակի մասին է խոսում նաև այն, որ անցյալում Հայաստանում ի հայտ են եկել մի ամբողջ շարք գիտական կենտրոններ՝ Գլաձորում, Տաթևում, Անիում, Հաղպատում, Սանահինում, Բարձրբերդում, ինչպես նաև միջին դարերում Հայաստանի տարբեր վայրերում գործող համալսարաններն ու ձեռնարանները:

Հայ գիտական միտքը շարունակել է իր ստեղծագործական խիզախումները նոր ժամանակներում ևս: Սակայն ազգային պետականության բացակայության պատճառով ստեղծված անպահովությունը նրա բազմաթիվ ակնհավոր ներկայացուցիչների ստիպել է հանգրվան գտնել Հայաստանի սահմաններից դուրս՝ օտար ավերում, որտեղ ստեղծվել են հայ մշակույթի նոր կենտրոններ: Գիտության պատմության մեջ արժանահիշատակ էջեր են թողել Մխիթարյան միաբանությունը, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, Մոսկվայի Լազարյան ձեռնարանը, Կ. Պոլսի դպրոցները, Կազանի և Ս. Պետերբուրգի համալսարանների հայագիտական ամբիոնները և մի շարք այլ գիտակրթական օջախներ:

Վճռական է ակադեմիայի ներդրումը այն բանում, որ Հայաստանում «մշտական գրանցում» են ստացել ֆիզիկամաթեմատիկական, տեխնիկական, բնական գիտությունների այնպիսի ժամանակակից ծյուղեր, ինչպիսիք են՝ աստղաֆիզիկան, մաթեմատիկան, տեսական և կիրառական ֆիզիկան, ռադիոֆիզիկան, էլեկտրոնիկան, մեխանիկան, հաշվողական տեխնիկան և ինֆորմատիկան, քիմիան, նուրբ օրգանական քիմիան, ֆիզիկական քիմիան, անօրգանական քիմիան, կենսաքիմիան, երկրաբանությունը, սեյսմաբանությունը, ֆիզիոլոգիան, բուսաբանությունը, կենդանաբանությունը, միկրոբիոլոգիան, ագրոքիմիան և այլն:

Ակադեմիայի մասնակցությամբ Հայաստանում կազմակերպվել են գունավոր մետալուրգիայի, էլեկտրատեխնիկայի, մեքենաշինության, քիմիական տեխնոլոգիայի, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների և ինֆորմատիկայի, սարքաշինության, կաբելային տեխնիկայի, մանրէաբանության, հիդրոտեխնիկական կառույցների մի շարք ծյուղային արտադրություններ, որոնք կարևոր տեղ ունենին հանրապետության ժողովրդական տնտեսության համալիրի, խոշոր շատ ձեռնարկությունների ստեղծման հետ կապված գիտական հիմնահարցերի լուծման մեջ:

Հայ ժողովրդի մշակութային հարուստ ժառանգությունը Հայկական լեռնաշխարհում, ինչպես և աշխարհի տարբեր մասերում նրա կերտած նյութական ու հոգևոր մշակույթի հուշարձանները հիմք հանդիսացան հայագիտության և, առհասարակ, հասարակական գիտությունների զարգացման համար:

Այո՛, Հայաստանի գիտությունների ակադեմիան հայ

ժողովրդի 20-րդ դարի խոշորագույն նվաճումներից է, սխրանքը, աշխարհին արժանապատիվ ու հպարտ ներկայանալու այցեքարտը: Որպես հայ՝ հպարտությամբ գրելով այս տողերը՝ ես ակամա հիշեցի մեծն Ջիվանու «Չախտոյ օրերը կուգան ու կերթան» հանճարեղ բանաստեղծության հետևյալ տողերը:

«Երկիրը ուսյալ զավակին է փայփայում մոր պես, Անկիրթ ցեղերը շարվե-շարան կուգան ու կերթան»:

Ջիվանու՝ խորը, շատ խորը իմաստ պարունակող այս տողերը խորհելու, մտորելու տեղիք են տալիս: Ջիվանին երիցս ճշմարիտ է. մենք ապրել, գոյատևել ենք, աշխարհին ճանաչելի գիտության բարձունքների ենք հասել, որովհետև ժառանգաբար հակված ենք եղել դեպի ուսումը, կրթությունը, գիտությունն ու մշակույթը: Կրթված մարդը, գիտնական այրը մեր պատմության բոլոր ժամանակներում եղել է հարգանքի, մեծարանքի, հպարտության մարմնավորում: Ես հիշում եմ, թե մենք՝ տարեցներս, ինչպիսի հարգանքով, անհաժանքով, հիացմունքով էինք արտասանում գիտնական, դոկտոր, ակադեմիկոս անունները: Նրանք՝ մեր ժողովրդի ուսյալ զավակները, մեր հպարտությունն էին, մեր փայփայանքի, հոգածության խորհրդանիշը:

Ցավոք, այսօր մենք գրեթե մոռացել ենք մեր ժողովրդին պահող, պահպանող, ապրեցնող այս մեծ խորհուրդը: Գիտնականը, ուսյալը այսօր ոչ միայն հարգանքի և ակնածանքի օբյեկտ չեն, այլև գրեթե անտեսված և արժեզրկված են: Մի բան, որ կործանարար է, աղետալի է մեր փոքրաքանակ ժողովրդի համար: Սա խնդիր է, որ պետք է մտահոգի մեր պետական այրերին, որովհետև սա արդյունք է նաև գիտնականի սոցիալական ստատուսի նսեմացման: Շուկայական հարաբերությունների մեր ժամանակներում, երբ տակնվրա են եղել արժեհամակարգերը, ի՞նչ է իրենից ներկայացնում խղճուկ աշխատավարձով գոյությունը պահպանող գիտնականը, որպեսզի հարգվի և մեծարվի:

Այսօր երիտասարդության կուռքը մեծահարուստներն են, իսկ իդեալը՝ ոչ թե գիտությունը, այլ ամենակուլ փողը, հարստությունը: Թերևս կրկնենք և հայտարարենք. առանց գիտության ժողովուրդը ապագա չունի, առանց գիտության սպառնալիք է կախվում մեր հետագա գոյության վրա: Ուրեմն լրջորեն, չափազանց լրջորեն մտածենք մեր ժողովրդի գոյությանը սպառնացող վտանգի մասին: 21-րդ դարի մենք պատմության արյունոտ ու դաժան խաչմերուկներում ապրել, գոյատևել ենք ժառանգական մեր զարմանալի հակվածությամբ դեպի գիտությունը, ուսումը, լուսավորությունը, գիրն ու մշակույթը, Ուշքի եկե՛ք, հայե՛ր: Այլապես կարժանանք Ջիվանու «Վայրի ցեղերի» ճակատագրին:

Միքելի՝ ընթերցող, կարճ ժամանակ հետո մենք նշելու ենք հայ գիտության կաճառի, մեր հպարտության ու պարծանքի առարկա գիտությունների ազգային ակադեմիայի 70 տարին: Մենք հետ կնայենք մեր անցած ուղուն, ուր հպարտության, հաղթանակների բազում էջեր ենք գրանցել ակադեմիայի պատմության ընթացքում: Եվ անպայման կհիշենք նրանց՝ առաջիններին, ակադեմիայի հիմնադիր անդամներին, որոնք դրեցին մեր նվաճումների, ձեռքբերումների սկիզբը:

«Գիտությունը» այսօր ընթերցողին է ներկայացնում հայ ակադեմիայի հիմնադիր անդամներին՝ համառոտ տեղեկանքով և այն տարիների լուսանկարներով: Նայեցե՛ք, կարդացե՛ք, ձանաչեցե՛ք և հիշեցե՛ք նրանց:

## ՀՀ ԳԱԱ ՀԻՄՆԱԳԻՒ ԱՆՊԱՄՆԵՐԸ



### ԱՐԵՂՅԱՆ ՄԱՆՈՒԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1943), բանագետ: Գրականագետ, լեզվաբան, բանասիրագետ: Փիլիսոփայության դոկտոր (1898), բ.գ.դ. (1935), պրոֆեսոր (1926), գիտության վաստակավոր գործիչ: 1893-97 թթ. ուսանել է Լայպցիգի, Բեռլինի, Փարիզի համալսարաններում, 1898-ին ավարտել է Ենայի համալսարանը: Շուրջ հինգ տասնամյակ մանկավարժական աշխատանք է կատարել, Երևանի պետական համալսարանի հիմնադիր դասախոսներից է, պատմագիտական ֆակուլտետի ղեկավար: Նրա հիմնական աշխատությունները նվիրված են հայ ժողովրդի բանասիրությանը,

գրականությանը, տաղաչափությանը, հայոց լեզվի տեսությանը հիմնահարցերին: Հայտնաբերել է «Սասնա ծռերի» երկրորդ տարբերակը: Նրա գրչին են պատկանում «Դավիթ և Միեր». ժողովրդական դյուցազնական վեպ, Շուշի, 1889, «Հայոց լեզվի ուղղագրությունը, Թ., 1892, «Գրաբարի համառոտ քերականություն» (1907), «Աշխարհաբարի հոլովները» (1908), «Ուղղագրության ռեֆորմը», Եր., 1925, «Գրաբարի քերականություն», «Հայոց լեզվի տեսություն», «Ռուս-հայերեն ռազմական բանասիրան», «Հայոց հին գրականության պատմություն» և այլ աշխատություններ: 1966-1970-ին հրատարակվել է Մ. Աբեղյանի Երկերի ժողովածուն՝ 4 հատորով: Նրա անունով է կոչվում ԳԱԱ գրականության ինստիտուտը:

### ԱԼԻՍԱՆՅԱՆ ԱՐՏԵՄ ԻՍԱՀԱԿԻ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1946): Ֆ.մ.գ.դ. (1940), պրոֆ. (1942): Գիտ. վաստ. գործիչ (1967): Ավարտել է Լենինգրադի պետական համալսարանը: Հիմնական աշխատությունները նվիրված են ռադիոակտիվության և ատոմի միջուկի հետազոտմանը: Հայտնաբերել է էլեկտրոններ առաքող առաջին արհեստական ռադիոակտիվ տարրը (սիլիցիում): Եղբոր՝ Ա. Ալիխանովի և Մ. Խ. Կոզոդակի հետ հայտնաբերել և հետազոտել է գրգռված միջուկային էլեկտրոն-պոզիտրոն զույգերի առաջնաման երևույթը, իր ավագ եղբոր՝ Աբրահամի հետ 1942-ին ստեղծել է Արագածի տիեզերական ճառագայթների հետազոտման կայանը: Փորձնականորեն հայտնաբերել է ռենտգենյան անցումային ճառագայթները: Նրա նախաձեռնությամբ ստեղծվել է Երևանի 6 ԳԵՎ էներգիայով էլեկտրոնաօդակային արագացուցիչը: Նա մեծ ավանդ ունի բարձր և գերբարձր էներգիաների մասնակիրների ինպուլսների դետեկտման և չափման նոր մեթոդների ստեղծման ասպարեզում:

Կազմակերպել է Մոսկվայի ինժեներաֆիզիկական ինստիտուտի միջուկային ֆիզիկայի ամբիոնը (1946): Հենց այդ ժամանակ էլ ընտրվել է ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ: Եղել է Երևանի ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն և ԵՊՀ ամբիոնի վարիչ (1943-73): Միֆի միջուկային ֆիզիկայի ամբիոնի և ԽՍՀՄ ԳԱ ֆիզիկական ինստիտուտի տարրական մասնիկների լաբորատորիայի վարիչ (1946-60): Հիմնադրել է Նոր Ամբերդի կայանը: Արժանացել է պետական մրցանակների (1941, 1948, 1970) և կառավարական այլ բարձր պարգևների:



# ՀՀ ԳԱԱ ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆՊԱՄՆԵՐԸ



## ՎԼԻՏԱՆՈՎ ԱՐԱՀԱՄ ԻՍԱՀԱԿԻ

ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս (1943, թղթ. անդ.՝ 1939), ՀՀ ԳԱԱ ակադ. (1943): Ֆ.մ.գ.դ. և պրոֆ. (1937): Սոցիալիստական աշխատանքի հերոս (1954): Ավարտել է Լենինգրադի պոլիտեխնիկական ինստիտուտը (1928): Աշխատել է ԳԱ Լենինգրադի ֆիզտեխ. ինստիտուտում (1927-41), ԳԱ տեսական և էքսպերիմենտալ ֆիզիկայի ինստիտուտի հիմնադիր և տնօրեն (1945-68): Նրա հիմնական հետազոտությունները նվիրված են միջուկային, տիեզերական ճառագայթների ֆիզիկային, միջուկային ռեակտորների ֆիզիկային և տեխնիկային, արագացուցչային տեխնիկային, տարրական մասնիկների ֆիզիկային: Կազմակերպել է Էլբրուսի տիեզերական ճառագայթների հետազոտման առաջին արշավախումբը: Ա. Ի. Ալիխանյանի հետ ստեղծել է Արագածի տիեզերական ճառագայթների հետազոտման կայանը (1942): Ա. Ի. Ալիխանյանի և Մ. Խ. Կոզոդակի հետ միասին հայտնաբերել և հետազոտել է զրգռված միջուկներից էլեկտրոն-պրոտոն զույգերի արձակման երևույթը: Փորձնականորեն ապացուցել է էներգիայի և իմպուլսի պահպանումը էլեկտրոնի և պրոտոնի աննգիլացիայի ժամանակ: Իրագործել է խորհրդային առաջին ծանրաջրային ռեակտորի գործարկումը:

Ա. Ալիխանյանը միջուկային ֆիզիկայի խորհրդային դպրոցի և տարրական մասնիկների արագացուցիչների ստեղծման հիմնադիրներից է, համաշխարհային հռչակ վայելող գիտնական: Պարգևատրվել է կառավարական բազմաթիվ շքանշաններով, երեք անգամ արժանացել է պետական մրցանակի:

## ԱՃԱՌՅԱՆ ՀՐԱՉՅԱ ՀԱԿՈՐԻ



ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1943): Լեզվաբան, բանասեր, բառարանագիր: Բ.գ.դ. (1953), պրոֆ. (1924), գիտ. վաստ. գործիչ (1933): Ավարտել է Փարիզի Սորբոնի համալսարանը (1898): Մանկավարժական աշխատանք է կատարել Շուշիի թեմական, Կարինի, Թավրիզի, Նոր Բայազետի, Նոր Նախիջևանի, Թեհրանի հայկական դպրոցներում, Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: ԵՊՀ հիմնադիր դասախոսներից է, պրոֆեսոր, Չեխոսլովակիայի արևելագիտության ինստիտուտի գիտ. բաժնի թղթակից անդամ (1937), Փարիզի լեզվաբանական ընկերության անդամ (1897):

Նրա գրչին են պատկանում Չարբախի, Վանի, Նոր Նախիջևանի, Նոր Ջուղայի, Հանչենի և այլ բարբառներից նվիրված հետազոտությունները, «Հայերեն արմատական բառարանը» (հ. 1-5, 1942-62), «Հայոց լեզվի պատմությունը» (հ. 1-2, 1940-51), «Լիակատար քերականություն հայոց լեզվի...» (հ. 1-6, 1952-71), «Մեսրոպի և գրերի գյուտի պատմության աղբյուրները և անոնց քննությունը» (1907), «Հայոց գրերը» (1928, 1968) և այլ հիմնարար աշխատություններ:

Հր. Աճառյանի անունն է կրում ԳԱԱ լեզվի ինստիտուտը:

## ԲՈՒՆԻԱԹՅԱՆ ՀՐԱՉՅԱ ԽԱՉԱՏՈՐԻ



ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1943): Կենս. գ.դ., պրոֆ. (1939): Գիտ. վաստ. գործիչ (1940): Կենսաքիմիկոս: Ավարտել է ԵՊՀ-ը (1930): Բժշկական ինստիտուտի կենսաքիմիայի ամբիոնի վարիչ (1937-60): ԵՊՀ-ի ռեկտոր (1942-46): ԳԱԱ կենսաքիմիայի ինստիտուտի տնօրեն (1961-81): ԳԱԱ կենս. գիտ. բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար (1947-57), ակադեմիկոս քարտուղար (1958-61), փոխպրեզիդենտ (1961-67), նախագահության անդամ (1964-81): Հայաստանի ֆիզիոլոգների, կենսաքիմիկոսների (1960-81) ընկերությունների նախագահ: Բնախոյզների գերմանական ակադեմիայի անդամ (1971): «Նյարդաքիմիա» հանդեսի գլխավոր խմբագիր (1980-81):

Հր. Բունիաթյանը Հայաստանում հիմնադրել է նյարդային համակարգի կենսաքիմիայի գիտական դպրոց: Նրա հիմնական աշխատությունները նվիրված են օքսիդացման պրոցեսներում, նյութափոխանակության նյարդային կանոնավորման մեջ առանձին վիտամինների, ֆոսֆատիդների և բիոգեն ամինների դերին և ուղեղի կենսաքիմիային: Ս. Գ. Մովսիսյանի հետ համատեղ առաջ է քաշել պիրիդինոկլետոնիդների մասնակցությամբ ամինաթթուների ամոնիակի զոյացման մասին տեսակետը:

Մասնավորապես ուսումնասիրել է Ա և Ց վիտամինների նշանակությունը, նյութափոխանակության նյարդա-հոմոդաք և պայմանական ռեֆլեկտորային կարգավորման երևույթները, զամմա-ամինակարագաթթվի դերն ուղեղի կենսաքիմիական գործընթացներում: Նրա գրչին են պատկանում մի շարք արժեքավոր և մնայուն աշխատություններ:



## ԳՈՒԼՔԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1943): Բույսերի գենետիկայի և սելեկցիայի բնագավառի մասնագետ:

Ավարտել է ԵՊՀ-ը (1927): ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի կենսաբանության ինստիտուտի տնօրեն (1938-43): ՀՀ ԳԱԱ -ն հիմնադրվելուց հետո ընտրվել է փոխպրեզիդենտ, ուր աշխատել է մինչև 1950 թվականը, կենսաբանական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար (1950-56, 1959-71): Հանրապետության գյուղատնտեսության նախարարության երկրագործության ԳՀԻ-ի լաբորատորիայի վարիչ (1956-76):

Չեղինակ է հացահատիկային մի շարք նոր տեսակների, որոնք երկար տարիներ մշակվել են Հայաստանի հատկապես բարձրադիր լեռնային շրջաններում: Ստեղծել է տարբեր տեսակի ցորենների հարուստ հավաքածու, մշակել խաչածև նոր մեթոդ: հիմնված հիբրիդային սերունդի գենետիկական բարդացման ընթացքի հետազոտման վրա: Ուսումնասիրել է բամբակի ֆոտոտեխնիկայի հիմնարար հարցերը, արդյունքներն օգտագործվել են պրակտիկայում: Մեծ վաստակ ունի հանրապետությունում կենսաբանական գիտությունների զարգացման, հատկապես ԳԱԱ գիտական նոր ինստիտուտների կազմակերպման բնագավառում:

Վարդան Գուլքանյանը գիտակազմակերպչական մեծ ունակությունների տեր մարդ էր:

## ԵՂԻԱԶԱՐՈՎ ԻՎԱՆ ՎԱՍԻԼԻ



ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1943): Հիդրոէներգետիկայի նշանավոր մասնագետ: Տեխ. գ.դ., պրոֆ. (1935):

1916-ին ավարտել է Ս. Պետերբուրգի էլեկտրատեխնիկական ինստիտուտը, 1922-43-ին եղել է նույն ինստիտուտի հիդրոէլեկտրական ուժային տեղակայանքների ամբիոնի պրոֆ., 1943-51-ին՝ Հայաստանի ԳԱ ջրաէներգատեխնիկական ինստիտուտի տնօրեն և հիդրոէլեկտրական լաբորատորիայի վարիչ (1945-57), ԵրՊՀ ջրային էներգիայի օգտագործման ամբիոնի վարիչ (1943-71), հիդրավիկ հետազոտությունների միջազգային ասոցիացիայի հիմնադիր անդամ, Թուրքիայի ակադեմիայի (Ֆրանսիա) թղթակից անդամ, Բուդապեշտի համալսարանի պատվավոր դոկտոր:

Նրա գիտահետազոտական ուսումնասիրությունները նվիրված են ջրային տնտեսության, հիդրոէներգետիկայի, հիդրավիկայի հարցերին: Մասնակցել է ԳՈՒԼ-ՈՒ-ի հանձնաժողովի աշխատանքներին, եղել է Դնեպրյան ՀԷԿ-ի նախագծի կառավարման փորձագետը, մասնակցել Վոլխովի, Սվիրի ու Ջորագետի հէկ-երի նախագծմանը:

1934-37 թթ. լույս է տեսել նրա «Հիդրոէլեկտրական ուժային սարքերը» (Մ.-Լ.) խորագրով եռահատորյակը: Չեղինակ է մի շարք աշխատությունների:



## ԹԱՄԱՄՇՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԶԱՔԱՐԻ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1943): Նշանավոր անասնաբույծ: Գյուղ. գ.դ. (1939), պրոֆ. (1922): Գիտ. վաստ. գործիչ (1935): ԽՍՀՄ ԳԱԱ պատվավոր ակադեմիկոս՝ 1956 թ.: 1903-ին ավարտել է Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտի գյուղատնտեսական ֆակուլտետը: 1903-17 թթ. աշխատել է Կովկասի հողագործության դեպարտամենտում՝ որպես անասնաբույծ: 1920-28 թթ. Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտում, այնուհետև Երևանի անասնաբուժական ինստիտուտի ամբիոնի վարիչ (1930-63), ֆակուլտետի ղեկավար (1931-38): Գյուղատնտեսության նախարարության անասնապահության ԳՀԻ-ի ավագ գիտաշխատող (1944-67):

Անդրկովկասում անասնաբուժական գիտության հիմնադիրներից է: Առաջինն է ուսումնասիրել անասնաբուժության տեղական ռեսուրսները: Կատարել է Հայաստանի անասնապահության գիտականորեն հիմնավորված շրջանացում, սկզբնավորել գյուղատնտեսական կենդանիների սելեկցիոն, ցեղային գործը: Գյուղատնտեսության նախարարության անասնապահության և անասնաբուժության ԳՀԻ-ի հիմնադիրներից է: 1920-ին կազմակերպել է Թբիլիսիի պոլիտեխնիկական ինստիտուտի կենդանաբանության ամբիոնը:

Թամամշյանի գիտահետազոտական աշխատությունները նվիրված են տավարաբուժության, մատղաշի աճեցման, տավարի ցեղերի շրջանացման, կենդանիների կերակրման հիմնահարցերին: 1947-ին լույս է տեսել նրա «Խոշոր եղջերավոր անասունները Հայաստանում՝ անցյալում և այժմ» մենագրությունը:

# ՀՀ ԳԱԱ ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆՊԱՄՆԵՐԸ



## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԳԱԼՈՒՍՏԻ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1943): Բուսաբույծ: Գյուղ. գ.դ. (1937), պրոֆ. (1939): Գիտության վաստ. գործիչ (1931): Ավարտել է Մոսկվայի համալսարանը (1911) և Մոսկվայի գյուղատնտեսական ինստիտուտը (1914): ԵՊՀ-ի հողագործության ամբիոնի վարիչ (1920-30), հայկական գյուղատնտեսական ինստիտուտի բուսաբուծության ամբիոնի վարիչ (1930-50): ԳԱԱ գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար և հողագործության ինստիտուտի տնօրեն (1943-48):

Բուսաբուծության, բույսերի զենետիկայի և սելեկցիայի բնագավառի ճանաչված մասնագետ: Ուսումնասիրել է Անդրկովկասի, մասնավորապես Հայաստանի կուլտուրական բուսականությունը: Նրա հետազոտությունների հիման վրա հանրապետությունում բարելավվել և շրջանացվել են ցորենի, գարու և աշորայի մի շարք հնագույն տեսակներ: Բացահայտվել են ցորենի նոր տեսակներ, ընդ որում՝ Վավիլոնի (Վանի), Ուրարտուի, Երևանյան և տասնյակ այլ ձևեր:

Միջայել Թումանյանը Հայաստանում հայտնաբերել և ուսումնասիրել է վայրենի ցորենի մի քանի տեսակներ՝ իրենց տարատեսակներով:

1957-ին ռուսաց լեզվով լույս է տեսել նրա «Ընտիր երկեր»-ի ժողովածուն:

Մեծ է նրա երախտիքը գյուղատնտեսական կարգերի պատրաստման գործում:

## ԻՍԱԳՈՒԼՅԱՆՑ ՎԱՉԵ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1943): Բ.գ.դ. (1939): Քիմիկոս-օրգանիկ:

Ավարտել է Մոսկվայի առևտրի ինստիտուտը (1917): Աշխատել է Մոսկվայի քիմիկադեղագործական գործարանում, ժողովրդական տնտեսության, Դ. Ի. Մենդելեևի անվան քիմիկատեխնոլոգիական ինստիտուտներում: Մոսկվայի նավթի ինստիտուտի նավթի քիմիայի ամբիոնի վարիչ, գիտական գծով պրոռեկտոր (1933-41): 1941-45-ին ԳԱ Հայկ. մասնաճյուղի քիմիական ինստիտուտի գիտաշխատակից և ԵՊՀ-ի պրոֆեսոր, 1946-ից Մոսկվայի նավթի քիմիայի և գազի արդյունաբերության ինստիտուտի գիտ. աշխատող, հավելանյութերի պրոբլեմային լաբորատորիայի վարիչ (1963-73):

Հիմնական աշխատությունները նվիրված են օրգանական սինթեզի, նավթի քիմիայի, ագետիլենի, նավթաքիմիական սինթեզի հարցերին: Նրա աշխատանքները խթանել են սինթետիկ հոտավետ նյութերի հայրենական արտադրության կազմավորումը: Մշակել է արդյունաբերության մեջ իրականացված հայրենական իոնիտների ներկայությամբ ֆենոլների ալկալիացման եղանակը:

Նրա գրչին են պատկանում մի շարք ինքնատիպ, արժեքավոր աշխատություններ, այդ թվում՝ «Սինթետիկ անուշաբեր նյութեր» (Եր., 1947), «Նավթի քիմիան» (Մ.-Լ., 1949) և այլ երկեր:

## ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻՔ ՍԱՀԱԿԻ



ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1943): Բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ-հրապարակախոս, հասարակական գործիչ, ԽՍՀՄ գրողների միության անդամ (1936): Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1892): Լայպցիգի համալսարանի ազատ ունկնդիր (1893): Երկար տարիներ աշխատել և ստեղծագործել է արտասահմանում (1893-95, 1897-1902, 1911-25, 1930-36): Հայաստանի գրողների միության նախագահ (1944-57):

ՀՍՍՀ 2-րդ-4-րդ գումարումների Գերագույն խորհրդի պատգամավոր, պետական մրցանակի դափնեկիր (1946): Պարգևատրվել է Լենինի երկու շքանշանով:

Սահմանված է Ա. Ս. Իսահակյանի անվան ամենամյա մրցանակ պոեզիայի բնագավառում (1975):

Ա. Ս. Իսահակյանի տուն-թանգարաններ կան Երևանում և Գյումրիում: Նրա անունով է կոչվում նախկին Ղազարապատ գյուղը (1945):

Ստեղծագործություններում, որոնցից առաջինները տպագրվել են 19 դ. 90-ական թթ., իսկ վերջինները՝ 20-րդ դ. կեսերին, արտացոլվել են դարաշրջանի էական գծերը, հայ ժողովրդի պատմական ճակատագիրը, նրա երազանքները:

Ավ. Իսահակյանը հայ ժողովրդի մեծ երախտավորներից է, հզոր մտածող և ազնիվ քաղաքացի, ազգային հանճար: Առանձին գրքերով և երկերի ժողովածուների ձևով 1939-40-ին լույս են տեսել նրա Ընտիր երկերի երկհատորյակը, 1950-51-ին՝ Երկերի ժողովածուի 4 հատորը, ապա՝ Երկերի ժողովածուն՝ 6 հատորով, Հիշատակարանը և այլ գործեր:



## ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՀԱԿ ԿԱՐԱՊԵՏԻ


ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1943): Անասնաբույծ-սելեկցիոներ: Կենս. գ.դ. (1961), պրոֆ. (1962): Գիտ. վաստ. գործիչ (1966), ֆիզիոլոգ: Գյուղատնտ. կենդանիների ֆիզիոլոգիայի բնագավառի մասնագետ, հասարակական-քաղաքական գործիչ:

Ավարտել է Երևանի անասնաբուծական ինստիտուտը (1933): Եղել է ԽՍՀՄ ԳԱ Հայկ. մասնաճյուղի գիտ. գծով նախագահի տեղակալ: ՀԿԿ ԿԿ քարտուղար, Մինիստրների խորհրդի նախագահ, արտաքին գործերի նախարար: ՀՍՍՀ գյուղմիմիստրության ԱԱԳՀ ինստիտուտի տնօրեն (1952-54): Հայկ. մանկ. ինստիտուտի ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ (1964-81), Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի լաբ. վարիչ (1958-ից): Ֆիզիոլոգիայի միջազգային միության, թռչնաբուծության միջազգ. գիտ. ասոցիացիայի գլխ. խորհրդի և ուղեղի հետազոտման միջազգ. կազմակերպության անդամ:

Նրա հիմնական աշխատությունները նվիրված են գյուղատնտեսական կենդանիների բազմացման և վերարտադրական ֆունկցիայի խթանման, թռչունների մթերատվության բարձրացման, արդյունաբերական թռչնաբուծության տարբեր ճյուղերի ինտենսիվացման հարցերին: Իր գործընկերների հետ միասին ստեղծել է նոր, երևանյան հավերի մասձվատու ցեղը: Հրատարակել է բազմաթիվ աշխատություններ, այդ թվում՝ «Արդյունաբերական թռչնաբուծություն և նրա զարգացման ուղիները» (Եր., 1965), «Թռչնաբուծություն» (Եր., 1969), «Լևոն Օրբելի» (Եր., 1973), «Երևանյան հավերի ծագումը, մթերատվությունը և տոհմային արժանիքները» և այլն:

## ԿՈՇՏՈՅԱՆՑ ԽԱՉԱՏՈՒՐ ՍԵԴՐԱԿԻ

Ավարտել է Մոսկվայի համալսարանը (1926): Ա. Ն. Սևերցովի անվան կենդանիների մորֆոլոգիայի ինստիտուտի էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի բաժնի վարիչ (1936-43): ՀՀ ԳԱԱ Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրեն (1943-45): ԽՍՀՄ ԳԱ բնագիտության պատմության ինստիտուտի տնօրեն (1946-53), Մոսկվայի համալսարանի ամբիոնի վարիչ (1943-61): Կառլովի համալսարանի (Պրագա) պատվավոր դոկտոր: ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր (1954): Նրա գիտական հետազոտությունները հիմնականում նվիրված են ֆունկցիաների էվոլյուցիայի հիմնահարցին, որոնք անփոփոխ են նրա «Համեմատական ֆիզիոլոգիայի հիմունքներ» երկհատորյակում (հ. 1, 1940, հ. 2, 1957): Ջբաղվել է նյարդային համակարգության առաջացման և զարգացման հարցերով և արել է արժեքավոր եզրակացություն: 1946-ին հրատարակվել է նրա «Ուրվագծեր Ռուսաստանի ֆիզիոլոգիայի պատմության» մենագրությունը: Արժանացել է Լոմոնոսովի անվան և պետական մրցանակների: Կարևոր արդյունքների է հասել էվոլյուցիայի տարբեր մակարդակներում գտնվող գրգռվող համակարգերի ֆունկցիոնալ նյութափոխանակությունում գոյություն ունեցող ընդհանուր գծերին վերաբերող հետազոտություններում, նոր ձևով է լուսաբանել նյարդահումորալ կարգավորման և նյարդային սնուցման հարցերը: Ցույց է տվել նյարդային գործընթացների փոփոխման հնարավորությունը նյութափոխանակության և սպիտակուցային մարմինների կառուցվածքի նպատակադրված ազդեցությունների միջոցով:



## ՀԱԿՈՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐՇԱԿԻ



ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ. (1936), պրոֆ. (1937): Գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ (1940): Ավարտել է Պետրոգրադի պոլիտեխնիկական ինստիտուտը (1917): Դասախոսել է Երևանի պետական համալսարանում (1920-30), տեխ. ֆակուլտետի ղեկավար (1928-29): Հիմնադրել և գլխավորել է ԵրՊԻ-ի տեսական մեխանիկայի (1930-39), թերմոդինամիկայի և ջերմատեխնիկայի (1939-54) ամբիոնները: ԵրՊԻ-ի ռեկտորի տեղակալ գիտական և ուսումնական աշխատանքների գծով (1936-44): Հիմնականում գիտական աշխատանքները վերաբերում են դասական և կիրառական թերմոդինամիկայի տարբեր հարցերին: Հիմնավորել է թերմոդինամիկայի երկրորդ օրենքը՝ ջերմաստիճանի ցանկացած նշանի դեպքում: Ձևակերպվել է թերմոդինամիկական հավասարակշռության շեղման օրենքների միասնական արտահայտությունը: Ջբաղվել է հեղուկից և ցանկացած թվով զազերից բաղկացած խառնուրդների թերմոդինամիկական հատկությունների ուսումնասիրությամբ՝ հաշվի առնելով նրանցում քիմիական ռեակցիաների և աբսորբացիայի հնարավորությունը: Խորհրդային Միությունում առաջիններից է վեկտորական հաշվի օգնությամբ շարադրել տեսական մեխանիկայի բուհական դասընթացը:

Հրատարակել է «Տեսական մեխանիկա, ստատիկա» (Եր., 1941), «Թերմոդինամիկա» (Եր., 1952), «Տեսական մեխանիկա» (Եր., 1954), «Ընդհանուր թերմոդինամիկա» (Մոսկվա, 1955), «Քիմիական թերմոդինամիկա» (Մ., 1963) և այլ աշխատություններ:

# ՀՀ ԳԱԱ ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆՊԱՄՆԵՐԸ

## ՀԱՄԱՐՁՈՒՄՅԱՆ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԱԶԱՍՊԻ



Աշխարհահռչակ գիտնական, գիտության մեծ կազմակերպիչ, հասարակական-քաղաքական գործիչ, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, ԽՍՀՄ ակադեմիկոս (1953, թղթակից անդամ՝ 1939), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1943), առաջին փոխարեգիտնա (1943-47), 1943-ից մինչև 1993-ի ապրիլը՝ պրեզիդենտ, ապրիլից ՀՀ ԳԱԱ պատվավոր պրեզիդենտ: ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի հիմնադիր և տնօրեն՝ 1947-ից, Բյուրականյան դպրոցի ստեղծող:

Ավարտել է Լենինգրադի պետական համալսարանը (1928), սովորել և 1931-ին ավարտել է ԳԱ գլխավոր (Պոլիկովյան) աստղադիտարանի ասպիրանտուրան: 1934 թվականին 25-ամյա Համբարձումյանը պրոֆեսոր էր: Խորհրդային Միությունում եղել է աստղաֆիզիկայի առաջին ամբիոնի վարիչը (1939), Լենինգրադի համալսարանի աստղադիտարանի տնօրենը և ուսումնական մասի պրոռեկտորը: Վ. Համբարձումյանը իբրև ՀՀ ԳԱԱ հիմնադիր ակադեմիկոս մեծ ավանդ է ներդրել ակադեմիական գիտության զարգացման գործում: Նրա գիտահետազոտական աշխատանքները, ինչպես գրել է ԳԱԱ թղթակից անդամ Լ. Միրզոյանը, «նվիրված են տեսական աստղաֆիզիկայի, աստղերի ու միգամածությունների, ֆիզիկայի, աստղաբաշխության ու աստղային դինամիկայի, աստղագիտության, աստղերի ու գալակտիկաների էվոլյուցիայի հիմնահարցերին: Վ. Համբարձումյանը ստեղծել է գազային միգամածությունների լուսարձակման քանակական տեսությունը, մշակել է նոր աստղերից արտանետվող և անկայուն աստղերի մակերևութից արտահոսող զանգվածների գազային զննահատման մեթոդ: Մշակել է աստղային համակարգերի վիճակագրական մեխանիկայի հիմունքները: Մի խոսքով, ակադեմիկոս Վ. Համբարձումյանի ուսումնասիրությունները, որոնք ընկած են աստղերի ու գալակտիկաների էվոլյուցիային նվիրված «Բյուրականյան ուղղության» հիմքում, գիտական մեծ հայտնագործություններ են և հեղինակին բերել են մեծ փառք: Դրա առավելագույն աշխարհի 53 ակադեմիկոսների, գիտական ընկերությունների և խորհուրդների կազմում ընտրվել է: Վ. Համբարձումյանը պարգևատրվել է կառավարական բարձր շքանշաններով, Լոմոնոսովի, Վավիլովի և Զեյնիովի անվան մեդալներով: Նրա ողջ կյանքը անօրինակ սխրանք էր՝ նվիրված աստղագիտությանը, Հայաստանին, հայ գիտության կայացմանն ու զարգացմանը:

Վիկտոր Համբարձումյանը հիրավի ֆենոմեն է:

## ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԼԵՎՈՆ ԱՆԴՐԵԱՍԻ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1943), ԽՍՀՄ ԲԳԱ ակադ. (1944): Բժշկ. գ.դ. (1937), պրոֆ. (1927), գիտ. վաստակավոր գործիչ (1940): Բժիշկ, բժշկության պատմաբան, առողջապահության բնագավառի ակադեմիկոս գործիչ: Հայտնաբերել է ջերմախտի նոր ձև, մշակել նրա դեմ պայքարի մեթոդները, տվել հիվանդության նոր դասակարգում: Ուսումնասիրել է սրտային աղմուկների ծագումը, առաջարկել սիրտ-անոթային հիվանդությունների ուրույն պատրոշման մեթոդ:



Ավարտել է Խարկովի համալսարանը (1909), աշխատել բժիշկ՝ Խարկովում, Թբիլիսիում, Ղազախստանում: Երևանի առաջին հիվանդանոցի գլխ. բժիշկ (1919): Հայաստանի բուժաշխատողների արհմիության նախագահ (1921-25), Երևանի տրոպիկական ինստիտուտի հիմնադիր (1923) և գիտ. ղեկավար, ԵՊՀ-ի, ապա բժշկ. ինստիտուտի ամբիոնի վարիչ (1923-68): ԳԱԱ բժշկության և կենսաբանության պատմության բաժնի վարիչ (1944-58): Սրտաբանության և սրտի վիրաբուժության ինստիտուտի հիմնադիր (1961) և առաջին տնօրեն: Բժշկական պատմության Միջազգային ակադեմիայի անդամ (1962-70):

Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի երկու շքանշանով: Լ. Ա. Հովհաննիսյանի անունով է կոչվում Երևանի սրտաբանության և սրտի վիրաբուժության ինստիտուտը: Հովհաննիսյանի նախածնունդային բնույթի հանքային ջրերը: Նա ռուսերեն է թարգմանել Միխայիլ Չերասու «Ջերմանց միխայրությունը» (1968): Մ. Արեդյանի և Ա. Տեր-Պողոսյանի հետ կազմել է «Լատին-ռուս-հայերեն բժշկական բառարանը», 1946-47 թթ. ռուսաց լեզվով լույս է տեսել նրա «Բժշկության պատմությունը Հայաստանում» հին ժամանակներից մինչև մեր օրերը» հնգահատոր մենագրությունը:

## ՄԱՆԱՆԴՅԱՆ ՀԱՎՈՐ ՀԱՄԱԶԱՍՊԻ



ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս (1939), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1943): Պատմաբան, բանասեր, աղբյուրագետ: Պ.գ.դ. (1938), պրոֆ. (1925): Գիտ. վաստ. գործիչ (1935): Խորհրդահայ պատմագիտության հիմնադիրներից է: Գիտական աշխատությունները նվիրված են հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմությանն ու բանասիրությանը, քաղաքներին, առևտրին, Հայաստանի և Անդրկովկասի պատմական աշխարհագրությանը, ճանապարհների ուսումնասիրությանը, չափագիտությանը: Լուսաբանել է հին և միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունները, մշակույթի պատմության հարցերը:

Ավարտել է Ենայի (1897), Պետերբուրգի (1898), Տարսուի (1909) համալսարանները: Դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Ներսիսյան դպրոցում: Խմբագրել է «Արմենիշե ցայտըրիֆտ», «Արշալույս» (1906), «Բաքու» (1917) պարբերականները: Եղել է ԵՊՀ-ի առաջին ռեկտորը, արևելագիտական, ապա՝ պատմագրական ֆակուլտետների ղեկավար (1921-25), հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ: 1925-ին ընտրվել է գիտության և արվեստի ինստիտուտի անդամ: 1931-ից նվիրվել է գիտությանը՝ թողնելով մանկավարժական աշխատանքը: 1928-ին Վիեննայում լույս է տեսել նրա «Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները», 1934-ին՝ «Մ. Խորենացու առեղծվածի լուծումը»: 1941-ին՝ «Մեսրոպ Մաշտոցը և հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնուրույնության համար»: Նրա «Հայաստանի առևտրի և քաղաքների մասին», «Ֆեոդալիզմը հին Հայաստանում», «Տիգրան Բ և Հռոմը», «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» և այլ մենագրություններ մնայուն գործեր են, զետեղված են նաև նրա Երկերի բազմահատորյակում:

## ՊԱՖԵՆՀՈՒՑ ԿՈՆՍԱՄՆՏԻՆ ՆԻԿՈԼԱՅԻ



ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1943): Ինժեներ-երկրաբան: Երկ.-հանք. գ.դ. (1943), պրոֆ. (1945): Գիտության վաստ. գործիչ: Ավարտել է Պետերբուրգի լեռնային ինստիտուտը: 1919-ից աշխատել է Համառուսաստանյան երկրաբանական կոմիտեում՝ երկրաբան (1919-62), Հայկական երկրաբանական վարչության գլխավոր երկրաբան, 1959-ից աշխատել է ՀՀ ԳԱԱ երկրաբանության ինստիտուտում, իսկ 1942-52-ին՝ Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր: Հիմնական աշխատ. նվիրված են Հայաստանի և Կովկասի ստրատիգրաֆիայի, տեկտոնիկայի, երկրաբանության, մագմատիզմի, հրաբխականության և մետաղածնության հարցերին: Առաջին անգամ ընդհանրացրել է Կովկասի վերաբերյալ եղած երկրաբանական հարուստ նյութերը, առանձնացրել երկրաբանական և մագմատիկ ֆորմացիաները, մշակել տարածքի տեկտոնիկական և կառուցվածքային շրջանացման սխեման, կազմել Կովկասի երկրաբանական քարտեզը (1956):

Նրա աշխատություններում ցույց է տրված Հայաստանի տեղը ալպիական ծալքավոր գոտում: Նա բազմաթիվ մենագրությունների և քարտեզների հեղինակ է:

## ՂԱՓԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶԻ



ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1943): Լեզվաբան: Բ.գ.դ. (1942), պրոֆ. (1930): Գիտ. վաստ. գործիչ (1942): ճանաչված հայագետ:

Նրա աշխատությունները նվիրված են հայոց լեզվի պատմությանը, ընդհանուր և պատմահամեմատական լեզվաբանությանը, հայերենի և փոքրասիական լեզուների առնչություններին, խեթերենի, ուրարտերենի, խուրթիտերենի հետ հայերենի ունեցած առնչություններին, Ուրարտուի սոցիալ-քաղաքական կյանքի և մշակույթի ուսումնասիրությանը: Սեպագիր արձանագրությունները հետազոտելով՝ պարզել է հայերենի էթնիկական կապերը հարևան ժողովուրդների հետ, լեզվական փոխառություններն ու փոխազդեցությունները: Սովորել և ավարտել է Պետերբուրգի համալսարանը (1913): Դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, մասնակցել է Ն. Մառի ղեկավարած Անիի պեղումներին (1914-17): ԵՊՀ հիմնադիր դասախոսներից է, լեզվաբանության ամբիոնի վարիչ (1927-54): ԳԱԱ նախագահության անդամ, հաս. գիտ. բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար (1943-49), ԵՊՀ-ի Ն. Մառի անվան կաթինետի վարիչ (1943-57), լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, իսկ 1950-56-ին՝ տնօրեն:

Գրիգոր Ղափանցյանի գրչին են պատկանում տասնյակ արժեքավոր հետազոտություններ, այդ թվում՝ «Ընդհանուր լեզվաբանություն» (1939), «Ուրարտուի պատմություն» (1940), «Հին Հայաստանի տեղանունների պատմալեզվաբանական նշանակությունը» (1940), «Խեթական աստվածները հայերի մոտ» (1940), «Հայասան հայերի բնօրրան» (1947), «Հայոց լեզվի պատմություն», «Արա Գեղեցիկի պաշտամունքը» և այլ մենագրություններ:

## ՄԱՆԽԱՍՅԱՆՑ ԱՏԵՓԱՆ ԱՐԳՍԻ




ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1943): Լեզվաբան, բանասեր, բառարանագիր: Բ.գ.դ. (1942): Ավարտել է Պետերբուրգի համալսարանը (1889): Դասավանդել է Ախալցխայի Կարապետյան և Եղիազարյան վարժարաններում, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, եղել է Հովանյան և Գայանյան օրիորդաց դպրոցների, Էջմիածնի Գևորգյան ճեմարանի, Ախալցխայի գիմնազիայի տեսուչ, հանրապետության գիտության և արվեստի գծով տերմինաբանական հանձնաժողովի նախագահ: Դասախոսել է Երևանի ուսուցիչների կատարելագործման, Թբիլիսիի մանկավարժական և քիմիական ինստիտուտներում: Երկար տարիներ աշխատել է հայ բառարանագրության կոթողներից մեկի՝ «Հայերենի բացատրական բառարանի» վրա, որը լույս է տեսել պատերազմի տարիներին:

Նրա գրչին են պատկանում տասնյակ գրքեր: Տակավին 1885-ին Պետերբուրգում լույս է ընծայել Ստեփանոս Տարոնացու (Ասողիկ) «Պատմություն տիեզերականը» (առաջաբանը՝ Կ. Եգյանցի): Հրատարակել է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկության» և այլ դասական երկեր: Նրա գլխավոր գործը «Հայերենի բացատրական բառարան»-ն է՝ չորս հատորով, որը լույս է տեսել 1944-45 թթ. և արժանացել է պետական մրցանակի:

# ՀՀ ԳԱԱ ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆՊԱՄՆԵՐԸ

## ՏԵՐՏԵՐՅԱՆ ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ



ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1943): Գրականագետ, բ.գ.դ. (1953), պրոֆ. (1929), գիտ. վաստ. գործիչ (1940): Ավարտել է Շուշիի հոգևոր սեմինարիան, ապա՝ Էջմիածնի Պատրիարքական ճեմարանը (1905): Սովորել է Պետերբուրգի նյարդաբանական ինստիտուտում (1907-09): Դասավանդել է Շուշիի և Երևանի թեմական դպրոցներում: ԵՊՀ հիմնադիր դասախոսներից է, հայ գրականության պատմության ամբիոնի վարիչ (1929-53): Դասախոսել է նաև Խ. Աբովյանի անվան հայկ. մանկ. ինստիտուտում: Հիմնական աշխատությունները նվիրված են 19-րդ դ. և 20-րդ դ. սկզբի հայ գրականության և գեղագիտական, գրաքննադատական մտքի զարգացման օրինաչափություններին, գրական հոսանքների և առանձին գրողների ստեղծագործությունների վերլուծությանը, գեղագիտական հայացքների ու ըմբռնումների լուսաբանմանը, ռուս գրականության պատմության հարցերին, ռուս գրականության հետ հայ գրականության կապերին: Ծանրակշիռ ներդրում ունի Հայաստանում գրականագիտական կադրերի պատրաստման և դաստիարակության, ինչպես նաև հայ գրականագիտության տերմինաբանության մշակման գործում:

Գրել է գրականագիտական շատ աշխատություններ: Լույս են տեսել նրա «Վահան Տերյան», «Միքայել Նալբանդյան. ազգության հրապարակախոսը», «Հովհաննես Թումանյան, հայրենի եզերքի բնաբերդ», «Մուրացյան», «Երվանդ Օտյանի ստեղծագործությունը», «Րաֆֆու «Սամվել» պատմական վեպը», «Աբովյանի ստեղծագործությունը», «Պարոնյանի գեղագիտական հայացքները», «Վ. Գ. Բելինսկի», «Պերճ Պռոշյան» և այլ մենագրություններ, որոնց մեծ մասը տեղ է գտել նրա «Հայ կլասիկներ» ընտրանիում:

## ՕՐԲԵԼԻ ԼԵՎՈՆ ԱՐԳԱՐԻ


ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս (1935), ԲԳԱ ակադ. (1943), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1943): Ֆիզիոլոգ, էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի ուսմունքի ստեղծողներից: Բժշկական ծառայության զենքավազնագետ: Մեծ հռչակ են ձեռք բերել նրա վեգետատիվ նյարդային համակարգին վերաբերող հետազոտությունները: Լայն ճանաչում են գտել սինապտիկ նյարդային համակարգի հարմարողական-սնուցող ֆունկցիայի, ողնուղեղ-ուղեղային գործունեության համադասեցման ֆիզիոլոգիայի և ուղեղիկի ֆիզիոլոգիայի մասին հիմնարար աշխատությունները:



1904-ին ավարտել է Պետերբուրգի ռազմաբժշկական ակադեմիան, աշխատել է որպես Ի. Պ. Պավլովի օգնական (1907-20): Լենինգրադի բժշկական ինստիտուտի պրոֆեսոր (1920-31): Ռազմաբժշկական ակադեմիայի պրոֆեսոր, Ռազմաբժշկական ակադեմիայի պետ (1943-50): ԽՍՀՄ ԳԱ Ի. Պ. Պավլովի անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրեն (1936-50), Կենսաբանական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար (1939-46), փոխպրեզիդենտ (1942-46), Ի. Ս. Սեչենովի անվան էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի և կենսաքիմիայի ինստիտուտի տնօրեն (1956):

ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր (1941): Սոցիալիստական աշխատանքի հերոս (1945): Պարգևատրվել է Լենինի հիմն, Աշխատանքային կարմիր դրոշի երեք և Կարմիր աստղի շքանշաններով: Լ. Ա. Օրբելու անունով է կոչվում ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտը: Ծաղկածորում գործում է Լևոն, Ռուբեն, Հովսեփ Օրբելի եղբայրների տուն-թանգարանը: Լևոն Օրբելու աշխատությունները հարստացրել են համաշխարհային գիտությունը և լայն ճանաչում գտել: Նա հիմք է դրել ֆիզիոլոգիական նշանավոր դպրոցներից մեկին: Հրապարակվել են նրա հարյուրավոր աշխատություններ, այդ թվում՝ «Ընտիր էջեր էվոլյուցիոն ֆիզիոլոգիայից» (Եր., 1967), «Դասախոսություններ նյարդային համակարգության ֆիզիոլոգիայից» (Եր., 1982), Ընտիր երկերը ռուսաց լեզվով, հինգ հատորով (1961-1968) և այլ աշխատություններ:

## ՕՐԲԵԼԻ ՀՈՎՍԵՓ ԱՐԳԱՐԻ



ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս (1935), ԽՍՀՄ ճարտարապետության ակադ. իսկ. անդամ (1941), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1943), հայագետ, կովկասագետ և հասարակական գործիչ: ՀՀ ԳԱԱ առաջին պրեզիդենտ (1943-47): Պետական էրմիտաժի տնօրեն (1934-51): ԳԱ նյութական կուլտուրայի պատմության ինստիտուտի տնօրեն (1937): Ավարտել է Պետերբուրգի համալսարանը (1911): Պետերբուրգի, այնուհետև Լենինգրադի համալսարանի դասախոս, պրոֆ. (1914-31): Նյութական մշակույթի պատմության պետական ակադեմիայի իսկական անդամ (1919-31): 1920-ից աշխատել է Պետական էրմիտաժում: Կազմակերպել է ղեկավարել է էրմիտաժի Արևելքի բաժինը: ԳԱ արևելագիտության ինստիտուտի լենինգրադյան բաժանմունքի վարիչ (1956-61):

Հովսեփ Օրբելու գիտական հետազոտությունները նվիրված են մշակույթի պատմությանը: Մասնակցել է Աճի պեղումներին (1906-17): Պեղումներ է կատարել Վանի միջնաբերդում (1916): Նրա մի շարք գիտական աշխատություններ վերաբերում են միջնադարյան Հայաստանի մշակույթին, հայկական վիճակագրությանը, հայ ժողովրդական էպոսին, քրդերեն լեզվին, Հայաստանի և Վրաստանի միջնադարյան ճարտարապետությանը: Մանկավարժական գործունեության հիմնական արդյունքներից է խորհրդային կովկասագետների դպրոցի ստեղծումը: Մեծ են նրա ծառայությունները «Սասունցի Դավիթ» էպոսի հրատարակության գործում:

ՀՀ ԳԱԱ-ն իր կազմավորման և հետագա գործունեության համար երախտապարտ է ականավոր գիտնականին՝ պատմաբանին, գիտության տաղանդավոր կազմակերպչին: ՀՀ ԳԱԱ հիմնադիր անդամների կազմը ցույց է տալիս, թե Հովսեփ Օրբելին ինչպիսի խստապահանջությամբ է ստեղծել ազգային ակադեմիան, ինչպես է նրանց համախմբել իր շուրջը և պատերազմի դժվարին տարիներին Հայաստանում զարգացրել գիտությունը: Նա ինքը իր գիտելիքներով և գիտակազմակերպչական տաղանդով մի յուրատեսակ ակադեմիա էր, գիտության ուղեհարթներից մեկը: Անգնահատելի է նրա հայագիտական, հայ ժողովրդի պատմությանը և մշակույթին նվիրված հետազոտական երկերի նշանակությունը: Ռուսաստանի գիտությունը և մշակույթը նույնպես երախտապարտ են նրան՝ 20-րդ դարի այդ լուսապայծառ մարդուն: Հովսեփ Օրբելին անկրկնելի մեծություն էր:

## Բյուրականի աստղադիտարանը դարձավ Գիտական միությունների միջազգային խորհրդի համաշխարհային տվյալների համակարգի անդամ



Բյուրականի աստղադիտարանը դարձավ Գիտական միությունների միջազգային խորհրդի (ԳԱՄԽ, International Council of Scientific Unions - ICSU) համաշխարհային տվյալների համակարգի (World Data System - WDS, <http://www.icsuwds.org/>) անդամ: Ներկայումս մի շարք գիտություններ և մարդկային գործունեության այլ ոլորտներ սկսել են լայնորեն օգտագործել բոլոր բնագավառներում կուտակված տվյալները և փոխանակել դրանք: Օրինակ, աստղագետներն օգտագործում են ատոմային սպեկտրադիտության տվյալները, հաղորդակցության միջոցները՝ օդերևութաբանության, տիեզերական թռիչքների համար օգտագործում են աստղաչափական տվյալները և այլն: Այդ առիթով գաղափար է հղացվել ստեղծել բոլոր տվյալների մի հսկայական շտեմարան, որտեղ հատուկ ձևաչափով կպահվեն և օգտագործման համար հարմար տեսքով մատչելի կլինեն տարբեր գիտություններից ստացված տվյալները: Հենց դրա համար էլ վերջերս վիրտուալ աստղադիտարանների օրինակով ստեղծվել է WDS-ը, որը հատուկ ծրագրային ապահովմամբ աշխատող ակտիվ տվյալների շտեմարան է:

Բյուրականի աստղադիտարանում է իրականացվել Հայաստանում առաջին թվայնացման մախագիծը՝ թվայնացված առաջին բյուրականյան շրջափայլությունը (Digitized First Byurakan Survey - DFBS), այնուհետև դրա հիման վրա ստեղծվել է Հայկական վիրտուալ աստղադիտարանը (Armenian Virtual Observatory - ArVO):

Այս աշխատանքների և Բյուրականում կուտակված այլ դիտողական տվյալների ներգրավման համար էլ ԲԱ ընդունվեց ICSU WDS, որի կազմում արդեն ներգրավվել են շուրջ 100 գիտական կազմակերպություններ, տվյալների կենտրոններ ու շտեմարաններ, գիտահետազոտական և այլ ինստիտուտներ: Տվյալների ինտեգրման շնորհիվ առավել հեշտ ու մատչելի է դառնում գիտական, հատկապես միջճյուղային հետազոտությունների իրականացումը, ինչը խթանում է համագործակցության նոր ծրագրերի և գիտական նոր ուղղությունների առաջացումը:

Հայկական աստղագիտական ընկերություն

## ՀՀ ԳԱԱ-ում քննարկվեցին հայ-բրիտանական գիտական համագործակցության հեռանկարները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան և Մոսկվայում Մեծ Բրիտանիայի դեսպանատան Գիտության և ինովացիոն կենտրոնը հունիսի 24-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում անցկացրին համատեղ քննարկում՝ գիտության ոլորտում համագործակցության վերաբերյալ: Որպես առաջնահերթային ուղղություններ՝ բրիտանական կողմը դիտարկում է տիեզերքի, քրային ռեսուրսների, էներգամարդյունավետության, վարակիչ հիվանդությունների, սննդի և կլիմայի փոփոխության ոլորտների հետազոտությունները: Անցկացվեց կլոր սեղան. զեկույցներով հանդես եկան Լոնդոնի Կայսերական թղթի քիմիական ճարտարագիտության բաժնի պրոֆեսոր, Քիմիայի թագավորական միության անդամ Սերգեյ Դազարյանը և ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի Մուլեկուլի կառույցի ուսումնասիրությունների կենտրոնի Օպտիկական սպեկտրոսկոպիայի բաժնի վարիչ, պրոֆեսոր Տիգրան Կուրտիկյանը:

Մոսկվայում Մեծ Բրիտանիայի դեսպանատան Գիտության և ինովացիոն կենտրոնի պատվիրակությունը այցելեց Հայաստանի գիտահետազոտական ինստիտուտներ, հանդիպումներ ունեցավ հայ գիտնականների հետ:

ՀՀ ԳԱԱ Տեղեկատվական-վերլուծական կենտրոն